

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ADJARIAN INSTITUTE OF LINGUISTICS

**ԼԵԶՈՒ
ԵՎ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**



**ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS**

**1-2 (12)
2014**



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

**Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:**

Գլխավոր խմբագիր՝ Համբարձումյան Վ. Գ.
խմբագրական խորհուրդ՝

Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ), Բարլեզիզյան Ա. Կ.,
Բրուտյան Լ. Գ., Եզեկյան Լ. Կ., Թրագուտ Յ. (Ավստրիա),
Խաչատրյան Ա. Հ. (Շվեդիա), Խաչիկյան Մ. Լ., Կատվալյան Վ. Լ.,
Կորտլանդտ Ֆ. (Նիդեռլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Հովհաննիսյան Ն. Գ.
(գլխավոր խմբագրի տեղակալ), Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Մ. Մ.
(Իրան), Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատ. քարտուղար),
Սաքայան Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ),
Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Аветисян Ю. С., Бардакчян Г. (США), Барлезизян А. К., Брутян Л. Г.,
Езекян Л. К., Катвалян В. Л., Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф.
(Нидерланды), Оганесян Л. Ш., Оганесян Н. Г. (заместитель главного
редактора), Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А.
(ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного
редактора), Тер-Меркерыан Р. (Франция), Тонапетян-Демопулос А.
(Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян А. А. (Швеция), Хачикян М. Л.

Chief Editor Vaszguen Hambardzumyan

Editorial Board

Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA), Barlezizyan A. K., Brutyan L. G.,
Ezekyan L. E., Khachatryan A. H. (Sweden), Khachikyan M. L., Hovhannisyan
L. Sh., Hovhannisyan N. G. (Deputy Chief Editor), Katvalyan V. L., Kortland F.
(Netherlands), Mohammadi M. M. (Iran), Sargsyan A. E., Sargsyan M. A.
(Editorial Secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (Deputy Chief
Editor), Ter-Merkeryan R. (France), Donabédian-Demopoulos A. (France),
Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն
© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն 2014

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ամսագրի սկիզբը եղել է 2003 թ., և հետագա վեց տարիների ընթացքում հնարավոր է եղել լույս ընծայել տասնմեկ համար (նախատեսված լինելով տարին երկու անգամ): Այդ ընթացքում ամսագիրն ունեցավ նկատելի ճանաչում առհասարակ գիտական, մասնավորապես ընդհանուր և հայ լեզվաբանության բնագավառում:

Ինչպես որ հատուկ է յուրաքանչյուր գիտական պարբերականի հրապարակմանը, հանդեսի 2003–2010 թթ. ընթացքում լույս տեսան տարբեր բնույթի հոդվածներ, բանավեճի և քննարկումների նյութեր, մամուլում և առանձին հրատարակված աշխատությունների (գրքերի, ժողովածուների և այլն) գրախոսություններ, հայ և օտարազգի անվանի հայագետների գիտական ժառանգությանը վերաբերող, ինչպես նաև հոբելյանական միջոցառումները ներկայացնող տեղեկություններ:

2010–2013 թթ. հանդեսը առարկայական պատճառներով չհրատարակվեց:

2014 թ. երկրորդ կեսին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը հանձնարարեց Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդին շարունակել լույս ընծայել հայ լեզվաբանության բնագավառում իր դերը խաղալու հնարավորություն ունեցող այդ հանդեսի հրատարակությունը:

Այժմ լույս է տեսնում հանդեսի հերթական համարը խմբագրական գրեթե նոր, համեմատաբար լայն կազմով, ընդամենն արտասահմանյան հայերենագետների ընդգրկմամբ, որպիսով մեծանում է լեզվի և լեզվաբանության ոլորտում ձեռքբերումների ամսագրային տարածման «աշխարհագրությունը»:

Ամսագիրը տպագրվելու է նույն պարբերականությամբ (տարին՝ 2 անգամ) և ծավալով (6–6,5 մամուլ), այս անգամ ամբողջովին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից:

Հոդվածները գրախոսվում են, քննարկվում խմբագրական խորհրդի նիստերում:

ՀՈԴՎԱԾՆԵՐ. STATYI. ARTICLES

ԳՐԱԲԱՐԻ «ԽԱՂՈՂ» ԵՎ «ԳԻՆԻ» ԲԱՌԵՐԻ ՇՈՒՐՋ

ՀՀ ԳԱՎ թղթակից անդամ Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հնագիտական տվյալները հաստատում են, որ Հայաստանը եղել է ինչպես վայրի խաղողի, այնպես էլ խաղողի ընտանեցման հիմնական տարածք:

Վերջերս «Արենի-1» քարայրում հայտնաբերված նյութերը հաստատում են, որ ոչ միայն խաղողի մշակությունը, այլև գինեգործությունը զարգացման բարձր մակարդակ է ունեցել արդեն Ք. ծ. ա. Ե. հազարամյակի վերջերից:

Խաղողի, խաղողագործական մշակույթի վաղնջական ակունքներ ունենալը տրամաբանորեն ենթադրում է այդ հասկացությունների հետ կապված հնագույն անվանումների գոյություն, որը և հաստատվում է մատենագրական տվյալներով, այդ անվանումների ստուգաբանություններով:

Այդ իմաստային դաշտի հիմնաբառերն են *խաղող*-ը և *գինի*-ն: Գրաբար մատենագրության ընձեռած տվյալներով փորձենք ցույց տալ այս երկու բառերի իմաստային, գործառական յուրահատկությունները:

Խաղող բառի ծագումը պարզ չէ: «Արմատական բառարանում» այն ստուգաբանված չէ¹: Գ. Ջահուկյանը հավանական է համարում խուռ. *haluli* «մի պտուղ» զուգահեռը:²

Մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ վաղնջական ժամանակներում գործառել են *խաղող*-ի անվանման հ.-ե. ծագում ունեցող բառեր: Նախքան դրանց անդրադառնալը նկատենք մի

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Ե., 1973, էջ 321–322:

² Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 313:

իրողությունն է: Ինչքան էլ զարմանալի է, գրաբարում *խաղող* բառը հաճախական չէր, թեև առաջին վկայությունները Ե դարից են: Բառը չեն գործածել Կորյունը, Եզնիկը, Բուզանդը, Եղիշեն, Խորենացին: Ագաթանգեղոսը և Փարպեցին վկայել են մեկական օրինակ: Հինգերորդ դարից հետո հայտնի հեղինակներից *խաղող* բառը չունեն Սեբեոսը, Ղևոնդը, Դրասխանակերտցին, Ասողիկը:

Աստվածաշնչում *խաղող*-ը վկայված է 25 անգամ: Ձեռքի տակ չունենալով Ս. Գրքի հունարեն համաբարբառը՝ *խաղող* բառի գործածությունները համեմատել ենք Աստվածաշնչի ռուսերեն համաբարբառի հետ: Վերջինում արձանագրված է 42 կիրառություն³:

Բերենք երկու օրինակ, որոնցում հայերեն բնագրում *խաղող* բառը չկա: «Կթեցին զայգիս իւրեանց» (Դատ., Թ. 27), ռուս. «собирали виноград»: «Կթեցէ՛ք, կթեցէ՛ք, ճռաքաղ արարէ՛ք զմնացորդսդ Բւրայելի» (Երեմիա, Զ. 9), ռուս. «до конца доберут остаток Израиля, как виноград, работай рукою твоею, как собиратель винограда»: Այս կարգի օրինակների «անհամապատասխանությունը» բացատրելի է. հայերենում «խաղող» իմաստը «թաքնված է» *այգի*, *ճռաքաղ* և նման այլ բառերում, որոնք զուտ «խաղողային» հասկացություններ են:

Ուշադրություն դարձնենք մի փաստի եւ: Հայերենում պտղատու (մրգատու) ծառանունները կազմվում են *-ի* կամ *-ենի* ածանցներով (*արմաւենի*, *թզենի*, *նշենի* և այլն): Գրաբարում *խաղողենի* վկայված չէ: ՆՀԲ-ն բերում է մեկ վկայություն միջինհայերենյան շրջանից. «Տայ *զհովութիւն* քափուրի, որ ի հնդիկս ի մէջ խաղողենոյ հանեն»:

խաղողենի, *խաղողի* չկա նաև բարբառներում (համեմայնդեպս արձանագրված չէ «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում):

Կարելի է հավաստել, որ նախագրաբարյան շրջանում (մթագնված ձևով նաև գրաբարում) *խաղող* հասկացությունն են արտահայտել հետևյալ բառերը.

Գինի. նախ նշենք, որ *հ.-ե.* և *ոչ-հնդեվրոպական* մի շարք լեզուներում *զինի* և *խաղող* հասկացությունները նույն արմատով կազմություններ են. հմմտ. ֆրանս. *vin* «գինի», *vinée* 1. «խաղողի բերք», 2. «պտղատու ճյուղ»,

³ Տե՛ս «Симфония к синодальному изданию Библии», Стокгольм, 1995:

հին սլավ. *вино* «գինի», և «խաղողի որթ», ռուս. *вино* «գինի», *виноград* «խաղող» և այլն:

Գրաբարի բառարանները *գինի* «խաղող» կամ «խաղողենի» իմաստը չեն արձանագրում: Այս իմաստները հաստատող մատենագրական անհերքելի տվյալներ նույնպես չկան. բնականաբար պետք է հենվենք երկրորդական թվացող փաստերի վրա:

ա) *Գինի* բառը ՆՀԲ-ն մեկնում է «Բեր որթոյ կամ այգւոյ, արիւն խաղողոյ, քաղցու կամ խազմուզ ինքնին եռացեալ...»: Ուշադրության արժանի է «Բեր որթոյ կամ այգւոյ» բացատրությունը, որից տրամաբանորեն ենթադրելի է՝ այգու կամ վազի բերքը գինին չէ, այլ խաղողը:

բ) Ե. դ. մատենագրությունից քաղված հետևյալ օրինակներում *գինին* դարձյալ վերաբերում է *խաղող* հասկացությանը. «Եւ զամենայն արեւելեան եւ զհիւսիսային եւ զհարաւային կողմանս քաղաքին գարդարէ դաստակերտօք, եւ սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս եւ ի տերեւս եւ բազում բազմաբերս եւ զինքերս ի նմա տնկեաց ովիտ» (Խոր., I, ԺԶ. 53)⁴:

Գինեբեր բառը վստահորեն կարելի է փոխարինել «խաղողաբեր»-ով. այդ է հուշում նաև *զանազանեալ ի պտուղս* կապակցությունը:

Նմանաբնույթ օրինակ ունի Եղիշեն. «Չորացան ազազեցան բուրաստանք, ծաղկոցաց նոցա, եւ տաշտախիլ եղեն որթք *գինեբեր* այգեաց նոցա» (Եղիշէ, 201)⁵: Մեկ օրինակ էլ բերենք Աստվածաշնչից. «Եւ զամենայն պտուղ իւղոյ եւ զամենայն *պտուղ գինւոյ* եւ ցորենոյ, զոր տացեն Տեառն զպտուղ իւրեանց, քեզ էտու զայն» (Թիւք ԺԸ. 12), ռուս. «Все лучшее из елєя и все лучшее из винограда и хлеба, начинки их, которые они дают Господу, я отдал тебе»:

Չանդրադառնալով *գինի* բառի ստուգաբանությանը (բնիկ հայերեն, հ.– ե. ծագման փաստը անառարկելի պետք է համարել)՝ ենթադրություններ կան նախնական *գին* արմատի գոյության մասին, գրաբարյան որոշ

⁴ *Մովսէս Խորենացի*, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն, լրացումները՝ Ա. Սարգսեանի), Ե., 1991:

⁵ Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ՝ Ե. Տէր-Մինասեան, Ե., 1957:

կազմություններ, եթե դրանք ձեռագրական աղավաղումներ չեն, այդ են հաստատում, *գինոտ* «գինու հոտ ունեցող», *գինութիւն* «գինարբություն», *գինարբու*, *գինաւէտ* (կա և *գինեւէտ*):

Գինի բառի մեջ *-ի* ածանցի գոյությունը ընդունում է և Գ. Ջահուկյանը. «Վաղնջահայերենում այն եղել է դեռևս գործուն և արդյունավետ ածանց, հին հայերենում դադարել է արդյունավետ լինելուց, թեև պահպանվել են ածանցելի և ածանցյալ հիմքերի հակադրություններ. ա) գոյականներ՝ *ալի-ք*, *աղաւնի*, *աղ-ատ-իք*, *այգի*, *անդի...* *գինի*»⁶:

2. *Որթ* «խաղողի տունկ». բնիկ հայկական բառ է, ինչ վերաբերում է բառիմաստին, ապա ՆՀԲ-ն և «Առձեռն բառարանը» «խաղող» իմաստը չեն նշում, իսկ «Արմատական բառարանը» Գ. Մագիստրոսից քաղված «Ճաշէին յորթ, ի հաց եւ ի կոզի» նախադասության մեջ իրավացիորեն արձանագրում է *որթ* «խաղող» իմաստը: «Ստուգաբանական բառարանում» այդ իմաստը նշում է և Գ. Ջահուկյանը (էջ 607):

Ս. Գրքից քաղված հետևյալ օրինակում *որթ*-ը դարձյալ «խաղող» իմաստով է գործածված. «Եւ եղիցին ստինք քո իբրեւ զողկոյզս որթոյ» (Երգ., Է. 8), ռուս. «И груди твои были бы вместо кистей винограда»:

3. *Այգի*-ն նախապես ունեցել է միայն «խաղողի այգի» իմաստը: «Արմատականում» *այգի*-ն դիտվում է որպես «խաղողային» հասկացություն՝ 1.«խաղողի այգի», 2.«խաղողի որթ»:

«Արդի հայերենի մեջ, – գրում է Հ. Աճառյանը, – արեւմտեան գրականում այգի պահել է իր բուն նշանակությունը, իսկ արեւելեան գրականում նշանակում է ընդհանրապես «պարտէզ»»⁷:

Այգի բառի նախնական իմաստն ակնառու է դառնում հատկապես Ս. Գրքի հայերեն և այլ լեզուների որոշ հատվածների համեմատությունից, հմմտ. «Եւ զանդս ձեր եւ զայգիս ձեր եւ զձիթենիս ձեր զագնիւս՝ առցէ» (Ա. Թագ., Ը. 14), ռուս. «И поля ваши и виноградные и масличные сады ваши лучшие возьмет»: «Երկիր... այգեաց հացի, երկիր ձիթենեաց իւղոյ եւ մեղու» (Դ. Թագ., ԺԸ. 32): «Եհար կարկտիւ զայգիս նոցա եւ զձգենիս նոցա

⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 231:

⁷ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 166:

եղեմամբ» (Մաղմ. Հէ. (ՀԸ.), 47), ռուս.՝ «Виноград их побил градом и сикоморы их – льдом»:

Ուշադրության արժանի է մի հանգամանք ևս. այլ տեսակի այգիները (ոչ խաղողի) գրաբարում արտահայտվում են *բուրաստան, դրախտ, պարտեզ...* բառերով. «Եւ եհան արձակեաց զնա... ի *դրախտէ* անտի» (Ծննդ., Դ. 23):

ԺԴ դ. վկայված հիշյալ օրինակում այգին հաստատապես «խաղող» իմաստն ունի. «Ի միում տեղոջէ ջամբէ բնութիւնն այգոյ քաղցրութիւն եւ լուծութիւն»⁸, բնագրի ռուսերեն թարգմանությունը. «Природа из общего источника дает винограду сладость»⁹:

Ստ. Մալխասյանցի բառարանում վկայված *այգեռուպ* «խաղողի հյութից պատրաստված դոշաբ, ռուպ» բառի *այգ(հ)* բաղադրիչը «խաղող» իմաստն ունի:

Այգի բառով գրաբարում առկա են տասնյակ կազմություններ, որոնք վերաբերում են «խաղող» հասկացությանը. *այգաւէտ, այգեգործ, այգեգործութիւն, այգեթաղ, այգեկիթ(ք), այգեկութ(ք), այգեստան, այգեւետ* և այլն:

Այգի բառի հ.–ե. ծագումը վիճարկելի չէ: Հ. Աճառյանը *այգի* բառի արմատը համարում է **այգ–ը* «խաղող», իսկ *–ի*–ն՝ ծառանունների բնորոշ մասնիկ: Այս ենթադրությունները հաստատվում են վերը բերված և նման օրինակներով: Կարելի է ենթադրել, որ վաղնջահայերենում *այգ(հ), որթ, գին(ի)* բառերն ունեցել են և «խաղող» իմաստը:

Հ.–ե. ծագումով այդ բառերի «խաղողային» բնույթը կողմնակիորեն կարող է հաստատել Հայաստանի տարածքում խաղողագործության և գինեգործության զարգացման հազարամյա ակունքների հավաստիությունը:

Կարելի է ենթադրել նաև, որ «խաղող» իմաստով գործածված *այգ(հ), որթ, գին(ի)* բառերը վաղնջահայերենում եղել են հայերենի տարածքային տարբերակներ կամ գործառել են ժամանակագրական տարբեր կտրվածքներում:

⁸ Տե՛ս *Բշօի*, Գիրք ի վերայ բնութեան, աշխատասիրութեամբ՝ Ս. Վարդանեանի, Ե., 1979, էջ 89:

⁹ Նույն տեղում:

խաղող բառը, ըստ երևույթին, հայերենում գործառել է ավելի ուշ՝ աստիճանաբար դառնալով համապատասխան հասկացության հիմնական արտահայտիչը գրաբարում և հայերենի հետագա բոլոր լեզվավիճակներում:

О ДРЕВНЕАРМЯНСКИХ СЛОВАХ ԽԱՂՈՂ (XALOŁ)

«ВИНОГРАД» И ԳԻՆԻ (GINI) «ВИНО»

Член.-корр. НАН РА Л. Ш. ОГАНЕСЯН

В статье рассматриваются семантические и функциональные особенности армянских слов *խաղող* xaloł “виноград” и *գինի* gini “вино”. В древнеармянском языке смысл слова “*խաղող* xaloł “виноград” выражался некоторыми словами и.-е. происхождения, в том числе словом *գինի* gini “вино”

ON THE OLD ARMENIAN WORDS ԽԱՂՈՂ (XALOŁ)

«GRAPE» AND ԳԻՆԻ (GINI) «WINE»

Member corresp. of the NAS RA L. SH. HOVHANNISYAN

In this article the semantic and functional features of words «*խաղող*»(grape) and «*գինի*» (wine) are investigated. In Old Armenian a number of words of IE origin for the sense *խաղող* xaloł “grape” were used, including the IE word *գինի* gini “wine”.

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Բանասիր. գիտ. թեկնածու Ն. Մ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ծեփ բառի համար Հ. Աճառյանը արմատական բառարանում բերում է հետևյալ նշանակությունները՝ «ծեփելու գործողությունը կամ ծեփելու նիւթ», որից՝ *ծեփել, ծեփած, ծեփկել, ծեփուկ* «ծեփ, թաղանթ», *ծեփելիք* «ծեփի համար շինված խիւս», *ծեփիչ* «մալա» (նոր բառ)¹: Հ. Աճառյանը հայերեն բառը համեմատում է վրացերեն *ծეფა, ძოფა* «մխրճել» բառերի հետ, բերում է վրացերենում պահպանված այդ բառերի և դրանց ածանցյալների իմաստները և եզրակացնում, որ հայերեն և վրացերեն բառերի նշանակությունները չեն կարող իրարից բխել, և որ «հնարավոր է, թէ՛ հայը և թէ՛ վրացին փոխառեալ են մի երրորդ ընդհանուր աղբիւրից, որ Հայաստանի նախաբնիկների լեզուն է»²:

Ծափ «երկու ափերը իրար զարնելը» բառը (*ծափի զծափի հարկանել, ծափ ծափի հարկանել* և այլն) Հ. Աճառյանը համարում է բնաձայնություն և համեմատում է բնաձայնական *կափկափել, շօշափել* բառերի հետ³:

Ծափ «պտուկ, հողե աման» իմաստով բառը, որից *ծափկոտրուկ, ծիլծափ* կամ *ծափծիլ* (բոլորն էլ բույսի անուններ են), համարում է անստույգ ծագման⁴:

Ծուփ «ջրերի տատանիլ ալեկոծուիլը», որից *ծփալ* «ջրերի տատանիլը», *ծփոց* «խնոցի», *երկրածուփ, ծովածուփ* և այլն նույնպես համարում է անհայտ ծագման⁵:

¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ., Ե., 1973, էջ 453 (այսուհետև՝ ՀԱԲ):

² Նույն տեղում:

³ ՀԱԲ, հ. Բ, էջ 450:

⁴ ՀԱԲ, հ. Բ, էջ 451:

⁵ ՀԱԲ, հ. Բ, էջ 475:

Գ. Ջահուկյանը *ծեփ* «ծեփելը, ծեփելու գործողությունը, սվաղ», *ծափ* «ծափ տալը, ծափահարել», *ծափ* «կավե աման, պտուկ» արմատները կապում է հայ. *տոփեւ*, «խփել» արմատի հետ և համեմատում հուն. δέφω «տրորել, ճմլել», δέψω «տրորելով փափկացնել», սերբ. депим, депти «հարվածել», լեհ. deptać «տրորել, խփել, տոփանել, ճզմել» արմատների հետ և կապում է հ.-ե. *deph- նախաձևին⁶: Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» աշխատության մեջ ուրարտական ծագման բառերի շարքում ամանների անվանումների դեպքում նշում է նաև «*ծափ*» բառը⁷, իսկ *ծեփել* բառի համար հավանական է համարում Աճառյանի կարծիքը ուրարտական ծագման վերաբերյալ⁸: «Հայերեն ստուգաբանական բառարանում» *ծափ* և *ծեփ* բառերի համար հավանական է համարում Հ. Աճառյանի՝ բնաձայնական կազմություն լինելու կարծիքը⁹: *Շուփ* բառի համար բերում է Լ. Սարաջևայի՝ բնիկ հնդեվրոպական ծագման լինելու տեսակետը¹⁰, բայց և ավելացնում է, որ «հնարավոր է պատկերավոր-բնաձայնական կազմություն լինելը»¹¹: Լ. Սարաջևան այդ արմատը ռուսերենի *зыбь* բառի հետ ծագած է համարում հնիս. *gʷb-, *gʷeb- նախաձևից: Լ. Սարաջևան, նշելով, որ ռուսերեն *зыбь* բառը չունի հավաստի ստուգաբանություն, բերում է ռուսերեն *зыбь* բառի և հայերեն *ծուփ* արմատի իմաստային որոշակի ընդհանրությունները և կանխադրում է հնդեվրոպական *gʷb-, *gʷeb- նախաձևը, իհարկե, ոչ այնքան հավաստի համարելով այդ նախաձևի կապը հնիս. *gʷb-, *gʷeb- ձևի հետ¹²:

Վ. Դալի բառարանում *зыбь* բառը բացատրվում է «ալիքավոր, օրորվող մակերևույթի վիճակ» (состояние волнистой, колеблющейся поверхности)¹³: Մ. Ֆասմերի բառարանում *зыбь*, *зыбать*, *зыблю* բառերը

⁶ Г. Б. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, էջ 208–209 (այսուհետև՝ Очерки):

⁷ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան Ե., 1987, էջ 436:

⁸ Նույն տեղում, էջ 437:

⁹ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 361:

¹⁰ Գ. Ջահուկյան, Очерки, էջ 368:

¹¹ Նույն տեղում:

¹² Этимология, 1976, М., 1978, էջ 64–66:

¹³ В. Даль, Толковый словарь живого великорусского языка, т. 1, М., 1978, էջ 697:

բացատրվում են «օրորել, օրորոց», իսկ հին ռուսերենի *зыбь* բառի համար բերվում է «ճահճուտ» (зыбкое место, трясина) իմաստը, այլև համեմատությունը ալբաներենի djer, djere բառերի հետ համարվում է անհավանական՝ նկատի ունենալով հնչյունական անհամապատասխանությունը¹⁴։ Իմաստային առումով ռուսերենի *зыбь* և հայերենի *ծուփ*, *ծփանք* ձևերի միջև կարելի է նկատել որոշակի ընդհանրություն։ Այստեղ, ինչպես և ալբաներենի դեպքում, բավական դժվարություն է ներկայացնում համեմատվող արմատների հնչյունական կազմը, հատկապես ռուս. *з* – հայ. *ծ* համապատասխանությունը։ Կարծում ենք, որ թե՛ հնչյունական, թե՛ իմաստային առումներով ավելի հավանական է Գ. Զահուկյանի այն կարծիքը, որը նա հայտնում է իր «Очерки» աշխատության մեջ. խոսելով հայերենի բաղաձայնների հնչյունական տարբերակների մասին՝ նա նշում է հ.-ե. *դ/տ* – հայերեն *ծ* համապատասխանությունը և բերում է հայ. *դոփեմ/տոփեմ* և *ծեփ/ծափ* արմատները՝ որպես հ.-ե. նույն նախաձևից առաջացած տարբերակներ։ Սրանց կարելի է ավելացնել նաև *ծուփ* բառը՝ իբրև ջրերի տատանվելուց, շարժվելուց առաջացած ձայն։ Եթե ընդունելի է այս արմատների՝ նույն նախաձևից ծագած լինելը, ապա հայերենում փաստորեն կան *ծեփ/ծափ/ծուփ* արմատները՝ ձայնդարձի երեք աստիճաններով։

Հայերեն այս արմատների՝ *տոփեմ/դոփեմ* ձևերից ծագելը կարելի է հիմնավորել նաև մեկ այլ փաստարկով։

Ժ. Վարբուրը նախապլավոներենի մի քանի բայահիմքերի և այդ բայահիմքերից կազմված բայանունների ծագումնաբանական քննության ժամանակ, ի թիվս այլ բայարմատների, բերում է նաև *tipati նախապլավոնական արմատի՝ սլավոնական լեզուներում և բարբառներում պահպանված ձևերն ու իմաստները և գալիս է այն եզրակացության, որ *tipati արմատի նախնական, սկզբնական իմաստը, ամենայն հավանականությամբ, առնչվում է «շոշափել, շոշափելով զգալ, ձեռք տալ, կաշել, շոշափել» և «խփել, ծեծել» իմաստների հետ՝ անկախ այդ արմատների բնաձայնական կամ այլ ծագման լինելու հանգամանքից։ Ըստ նրա՝ այս արմատին է հանգում ռուսերենի *типунья* «կարմիր կավ՝ կճուճներ պատրաստելու համար» բառը, որ համապատասխանում է

¹⁴ М. Фасмер, Этимологический словарь русского языка, т. 2, М., 1966, էջ 109:

սլովեններենի *típati piskre*-ի «կավե ամաններ պատրաստել» իմաստին: Վարբոտը այնուհետև գրում է. «...**tipati* արմատի իմաստային կապը բրուտագործության հետ իրական հիմքեր է տալիս պարզելու համար այնպիսի արմատների կապը, ինչպիսիք են «շոշափել, ձեռք տալ, կպչել» և «խփել, ծեծել»... չէ՞ որ բրուտի աշխատանքը ենթադրում է կավի մեխանիկական մշակման մի քանի գործընթաց՝ սկսած կավը տրորելուց, ծեծելուց (ոտքերով կամ հավանգակոթով) մինչև ձեռքերով շոշափելով, ձեռքերով կպչելով՝ կավին անոթի ձև տալը: Կարելի է ենթադրել, որ նախասլավոներենի **tipati*-ն նախապես նշանակել է «սեղմելով կպչել, ծեծել, խփել» և մի քանի նախասլավոնական բարբառներում պրիմիտիվ, զարգացման ցածր մակարդակի վրա գտնվող բրուտագործության տերմին է եղել»¹⁵: Վարբոտը սլավոնական **tipati* և բալթիական լեզուների (լիտվ. *tépti* «քսել, կավով ծեփել», *tapnoti* «ծափ տալ, շոյել, ողորկել, հարթեցնել» (*похлопывать ладонью, ласкать, гладить*) ձևերի միջև նկատում է ծագումնաբանական իմաստային ընդհանրություններ. այդ ձևերի միջև գոյություն ունեցող ձայնավորային տարբերությունները նա համարում է հին ձայնդարձային համակարգի հետքեր¹⁶:

Ժ. Վարբոտի՝ վերը բերված բառաքնական ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ սլավոնական լեզուներում ևս «խփել, ծեծել, տրորել» իմաստով արմատին են հանգում «ծափ տալ, կավե աման» բառերը:

Կ. Դ. Բաքը հնդեվրոպական լեզուների հոմանիշների բառարանում գրում է, որ «ծեծել, խփել» իմաստով բառերից կարող են ծագել գործիքների անվանումների նշանակությամբ բառեր, նաև այնպիսիք, որոնք առաջացել են խփելու ձայնից, և բերում է օրինակներ հնդեվրոպական լեզուներից. օրինակ՝ միջին վերին գերմ. *topf* «կավե աման», նոր վերին գերմաներեն *topfer* «բրուտ», *topfererde* «կավ», *töpferei* «բրուտանոց»¹⁷:

¹⁵ Ж. Варбот, Этимология, 1974, М., 1976, էջ 32–35.

¹⁶ Նույն տեղում, էջ 34–35:

¹⁷ C. D. Buck, Dictionary of Selected Synonyms in the Principal Indo-European Languages, Chicago, 1949, էջ 616:

ЭТИМОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

Кандидат филолог. наук Н. М. СИМОНЯН

В статье рассматриваются корни *ծէլի* [сеп^с]/*ծալի* [сап^с]/*ծուլի* [суп^с], о происхождении которых в арменистике существуют разные мнения. Выдвигается версия, что эти корни являются вариантами и.-е. корня *deph– (см. Г. Б. Джаукян, *Очерки...*, с. 208) с разными степенями аблаута. Приводятся аналогичные семантические развития из славянских языков.

ETYMOLOGICAL OBSERVATIONS

PhD N. M. SIMONYAN

The roots *ծէլի* [сеп^с]/*ծալի* [сап^с]/*ծուլի* [суп^с], have been considered in the article, about the origin of which there exist various opinions in Armenology. A version has been put forward that these roots are variants of the Indo-European root *deph– (see G. Djahukyan, *Essays...*, p. 208) with different grades of ablaut. Analogous semantic developments from Slavonic languages have been introduced.

ԼԱՏԻՆԱԲԱՆ ԶԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

«Բառգիրք հայոց»-ի մի հետաքրքիր երևույթ է այն, որ նրանում տեղ են գտել լատինաբան հայերենի տարաբնույթ ձևեր: Դրանք կա՛մ հանդես են գալիս բառահոդվածի գլխաբառի տեսքով, կա՛մ գործածվում են նյութի շարադրման ընթացքում: Հայտնի է, որ լատինաբանությունը հայերենում սկիզբ էր առել 14-րդ դ. 10-ական թթ. և արհեստական միջամտության պայմաններում տարբեր չափերով գործելիս է եղել մինչև 18-րդ դ. 70-80-ական թթ: Հայտնի է նաև, որ լատինաբանության հաղթահարումը Մխիթարյանների՝ այդ ուղղությամբ գործադրած ջանքերի արդյունք է¹:

Այս դեպքում թերևս բնական է, որ 1690-ական թթ. կազմված «Բառգիրք Հայոց»-ում տեղ գտնեին ոչ միայն լատինաբան հեղինակների ստեղծած, այլև հին հայերենի շրջանում հունաբան դպրոցից անցած նույնպիսի ձևերի գործածությունները: Դրանք գրավոր խոսքում դարձել էին մի տեսակ սովորական, ուստի ինչպես նկատում ենք այս գրական հուշարձանի օրինակով, տեղ են գտնել նաև արևելահայ միջավայրում լույս տեսնող գրավոր աշխատանքներում: Եվ դա հնարավոր է, որովհետև «Բառգիրք հայոց»-ի աղբյուրների որոշակի մասը նախկինում գրչության տարբեր կենտրոններում և կրթական այլևայլ միջավայրում կազմված բառարաններ և ցանկեր են (անխորագիր բառարաններ, «Բառք քերթողականք», «Բառք յունարէն», «Բառք հայոց» և այլն)²:

¹ Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.), Ե., 2010, էջ 164-180, 326-346 և այլն:

² Ավելի մանրամասն տե՛ս «Բառգիրք հայոց», քննական բնագիրը առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Ե., 1975, էջ ԻԶ-ԼԸ (այսուհետև՝ ԲՀ):

Ինչպես վերը նշեցինք, դրանք երկու կարգի են:

1. Իբրև բառահոդվածի գլխաբառ հանդիպում են հետևյալ ձևերը:

ա) *Գլեէին* «ծածկէին, յաղթէին» բառի արմատն է *գհլ* («քար»), որից ունենք *ի գհլ գալ* («գլորվել»), *ի գհլ հանել* («գլորել»), *գլեցուցանել* («խոսքով հաղթել, բերանը փակել»), *գլումն* («հաղթություն, հաղթելը» և այլն, և որը *գեղ* արմատի տարբերակն է *ե//ի* ձայնդարձով³: Աճառյանը, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, գտնում է, որ այն ծագում է հե. *velu– արմատի *vēlu– (երկար ձայնավորով) տարբերակից, ըստ Ջահուկյանի՝ հե. *xēl– (կամ *xēlā–) [*xēl(ə)–]. հմմտ. սանս. vālatē «դառնում է», valitā «դարձած, ծռած», valayati «շրջել, գլորել», հուն. éλω «ոլորել, գլորել, գլորվել, փաթաթվել», εἰλω «գլորել, փաթաթել, շրջապատել, մագլցել», éλισσω «դարձնել, ոլորել, գալարվել», éλιξ «ոլորուն, գալարուն. բաղեղ, ճախարակ», լատ. volvo «ոլորել, գլորել, դարձնել», volumen «ոլորք, գալար, հատոր (գրքի)», գոթ. waltjan «ոլորել, գլորել» և այլն⁴:

Եթե ձայնդարձի տարբեր աստիճանի ձևեր են՝ 1) *գել//գհլ//գ(ը)լ–եմ* «ոլոր(–ուն, –ած), պիրկ, կլոր» (հմմտ. «գլաքար»)» (բուն իմաստով), 2) *գալ(–ար, –ած)* (հմմտ. «չորացնելու համար ոլորած՝ հյուսած բանջար՝ ավլուկ և այլն») *//գուլ* (բրբռ.) «պտտ(–ած), բուր, ոչ սուր», այլն «ձվի դեղնուց, խորիզ» *//(բրբռ.) գլուլ* (նաև *գլուլ–գլուլ* «կաթիլ–կաթիլ») «(վայրի) ոլոր» (երկրորդական իմաստով), 3) *գաղ (գաղ–գաղ* «անիվ, ժողովելը» *//գաղ(–ել)* «ծածկել, թաքցնել» *//սալլ*, (բրբռ.) *գ^oալգ^oալ–ի* «(անվավոր) փոխադրամիջոց. սայլ» (երկրորդական իմաստով), ապա այն իրոք հանգում է ընդհանուր հե. *xēl– (ըստ նոր տվյալների՝ հե. *k^[h]oel–) նախաձևին⁵:

³ «Բառգիրք հայոց», էջ 67: Հմմտ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 555–556:

⁴ Հ. Աճառյան, նշվ. աշխ., 530–531, Դ. Բ. Джаукян, Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967, էջ 136: Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 155: Հմմտ. Ն. Մ. Մինոյան, Հնդեվրոպական ձայնդարձի արտացոլումը հին հայերենի բայարմատներում («Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով: Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, 17–19 հոկտեմբերի, 2013 թ., զեկուցումների ժողովածու», Ե., 2014, էջ 320):

⁵ Տե՛ս «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. Ա, Ե., 2001, էջ 228, 251 և այլն: Գ. Բ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 146, 154, 145, 161 և այլն: Դ. Բ. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т. 2,

Բայական այդ ձևը, որը դիտվել է իբրև «անհայտ ծագման կամ կասկածելի», հայերենի համակարգին խորթ կամ անհարիր մի կազմություն է: Ընդ որում՝ քննական բնագրում այն չունի ձեռագրական որևէ տարբերություն, ինչպես նաև որևէ կերպ չի ծանոթագրվում, այսինքն՝ ունի միանգամայն հավաստի և անխաթար դրսևորում:

Այն լատինաբան հայերենի նորամուծություններից է, արտահայտում է սահմանական եղանակի կրավորաձև անկատար անցյալ ժամանակի իմաստ, տվյալ դեպքում՝ «ծածկվում էին, հաղթվում էին», որ բառարանում բացատրված է հին գրական հայերենի նույն ժամանակի ընդհանուր՝ «ծածկում էին, հաղթում էին» ձևերով: Հայտնի է, որ հին գրական հայերենում սահմանական անկատար անցյալ ժամանակը ներգործական և կրավորական իմաստի արտահայտման համար ուներ մեկ ընդհանուր ձև (օր.՝ *գրէին* «գրում էին», «գրվում էին» և այլն): Այնինչ լատինաբան հեղինակներն այս դեպքում ևս հանդես են բերում արհեստական («բնագրոսիկ») միջամտություն, այսինքն՝ լատիներենի օրինակով, հատկապես *է* խոնարհման բայերի կրավորականի համար խոնարհիչ ձայնավորի պահպանումով ստեղծում են արհեստական հիմք (իմա՝ ոչ թե *բէր*–, այլ *բէր*–*է*– և այլն)՝ վերջինիս ավելացնելով անկատարի վերջավորությունները (*–էի*, *–էիր*, *–էին* և այլն): Ուստի կարելի է մտածել, որ հին գրավոր հայերենի մեջ 14–րդ դ. 10–ական թթ. արհեստականորեն մուտք գործած լատինաբան ձևերը ինքնաբերաբար շարունակում են տեղ գտնել հետագա գրական հուշարձաններում⁶:

Тбилиси, 1984, էջ 718–719: Հմմտ. Վ. Գ. *Համբարձումյան*, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, 1, Ե., 1998, էջ 34–38: V. G. Hambardzumyan, *Armenian and Indo-European (Essays on Comparative Lexicology of the Armenian Language)*, Yerevan, 2014, էջ 90–91, 106–111 և այլն:

⁶ Տե՛ս Վ. Գ. *Համբարձումյան*, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում («*Լրաբեր հասարակական գիտությունների*», 1982, 2, էջ 63–72): Նույնի, Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ–ԺԹ դդ., Ե., 1990, էջ 86–97, Նույնի, Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները («*Պատմաբանասիրական հանդես*», 2008, 1, էջ 159–179), Նույնի, Գրական հայերենի հունաբան և լատինաբան տարբերակների փոխհարաբերության հարցի շուրջ («*Լրաբեր հասարակական գիտությունների*», 2008, 2, էջ 136–149) և այլն:

բ) Հին գրական հայերենի ներգործական սեռի *դնեմ* (անորոշը՝ *դնել*) բայը բառարանում բերված է *դնանիլ* «դրվել» արհեստական ձևով, որ հատուկ է լատինաբան հայերենին, և բացատրվել մեկ այլ արհեստականով՝ *դնիլ* «դրվել», որպիսով ստացվել է *-ան-* սոսկածանցով և առանց այդ ածանցի կազմություն, որն ամբողջովին խորթ է և արտաքին «անիմաց» միջամտության արդյունք [ԲՀ, 1975, էջ 80]: Դա բացատրվում է նրանով, որ լատինաբան հեղինակները տարբեր ժամանակներում բայի չորս խոնարհումների փոխարեն փորձեցին գործածել երեքը՝ *-ել*, *-ալ*, *ուլ*, իսկ *-իլ* խոնարհումը հատկացրին «կրավորական սեռի» գործադրմանը⁷:

գ) *Ընթարց* «նախդիր, որ զսեռականն պահանջէ. առանց» բառը չունի «Նոր հայկազյան բառարանը», չկա նաև Աճառյանի բառարանում, ընդամին ոչ միայն որպես այդպիսին, այլև *թարց* արմատի տակ՝ իբրև ենթադրելի *ըն-թարց* տիպի բաղադրություն [ԲՀ, 1975, էջ 112]: Այն դուրս է մնացել նաև Գ. Ջահուկյանի բառարանից, որովհետև այն ոչ թե բառ է, այլ բառաձև⁸: Բառը բաղադրված է *ըն* լատինաբան նախամասնիկով և *թարց* բառով, իբրև նախադրություն: Եվ քանի որ այս *ըն* մասնիկը գործածվում էր սեռական-տրականի հետ՝ կազմելու ներգոյական հոլովի ձև, ուստի *ընթարց*-ը բառաձև է, որ «Բառգրքում» դրվել է իբրև բառարանային միավոր (գլխաբառ)՝ իր ուրույն բացատրությամբ⁹:

դ) Ն *ենթակայում* գլխաբառը բերվում է «պարառական հոլով, ենթակայ, բայց նշանակել զպատահումն» բացատրությամբ, այն *ենթակայ* բառի եզակի ներգոյական հոլովի ձևն է, *ն-* մասնիկով և *-ում* վերջավորությամբ տրական հոլովով (*ենթակայում*) կազմություն՝ հորինված լատինաբան քերականների կողմից, արտահայտելու ներգոյական հոլովի իմաստ [ԲՀ, 1975, էջ 237]¹⁰:

ե) Իբրև գլխաբառ՝ հանդիպում է *ներում* բառը, որը բացատրվում է՝ «ըստ որում», այսինքն՝ «համաձայն որի» (բառացի՝ «որի մեջ՝ ներսում»), ընդ

⁷ Վ. Գ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն (14–18-րդ դդ.), էջ 153:

⁸ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. 1, 1836, էջ 776: Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ 2, 1973, էջ 126, 162: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 248:

⁹ Հունաբան և լատինաբան հայերենում արհեստականորեն ներմուծված *ըն* (*նի*), այլև *ն* մասնիկը փոխառված է հունարենից (έν):

¹⁰ Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 252:

որում՝ քննական բնագրում այն դրված է *ներունակ* գլխաբառով բառահոդվածից հետո (այբբենականի խախտմամբ) [ԲՀ, 1975, էջ 239–340]: Հայտնի է, որ հին գրական հայերենում կար այդ բառը, թեպետև այլ գրությամբ՝ «*նէրում* կամ *նէրում*, այսինքն՝ *յորում*, *յում* (*ի նէր*, *էրում*)», համարժեք հուն. ἐν ὧ, լատ. in quo. ձևերին. «Ներում զինչ, ներում որպիսի ինչ» (Պորփիր), ինչպես նաև քերականական այլ գործառությամբ¹¹: Հին գրական հայերենում այն հունաբան կազմություն է, իսկ «Բառգիրք հայոց»-ում հավանաբար լատինաբան կազմություն, հակառակ դեպքում՝ հունաբան կազմության ժառանգում:

զ) *Ներտան* գլխաբառը բացատրված է «ի տան» («տան մեջ») [ԲՀ, 1975, էջ 240]: Այս դեպքում ներգոյական հոլովի իմաստն արտահայտված է *ներ* նախդիր–նախամասնիկի և *տուն* գոյականի տրական հոլովի (տան) բաղադրմամբ:

է) *Նիսիք* «ումեմն» բառաձևի գրանցումը ստույգ է, այն չունեն հետագա բառարանները [ԲՀ, 1975, էջ 241]: *Նիսիք* «ինչ–որ բանում, մի բանի մեջ» (քննական բնագրում՝ «ումեմն») բառաձևը *իմն* անորոշ դերանվան արհեստական կազմությամբ ներգոյական հոլովն է՝ *ն*– մասնիկով (*ն–իսիք*): Բառարանում այն բերված է իբրև գլխաբառ, որն էլ բացատրված է *ումն* անորոշ դերանվան *ումեմն* «ինչ–որ մեկին» ձևով¹²:

ը) *Նոյր* գլխաբառը *n* դերանվան եզակի սեռականի ձևն է, որ, *ն*– մասնիկի հետ բաղադրվելով, կազմում է տվյալ բառի ներգոյական հոլովը. Բառարանում այն բացատրված է «նորա. սեռական» և այլն [ԲՀ, 1975, էջ 243]:

2. Իբրև բառերի բացատրության մեջ գործածվող ձևեր:

ա) «Բառգրքի» էջ 12–ի տողատակի ծանոթագրության մեջ նշվում է՝ «կղզի է *ներ* ծովում Վասպուրականումն», որ քննական բնագրում ուղղված է «կղզի է *ընդ* ծովում Վասպուրականումն»: Սա նշանակում է, որ լատինաբան *ներ* նախդիրը (տարբերակ՝ *ըն*, *ն*–) փոխարինված է բուն գրաբարյան *ընդ*–ով: Այնպես որ քննական բնագիրը ևս զերծ չի մնացել նման արհեստական ձևերից:

¹¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 421:

¹² Վ. Գ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն, էջ 152:

բ) Քարք գլխաբառով բառահոդվածում գործածվում է *ներգլխումն* «գլխում՝ գլխի մեջ» ձևը. «Քարք – սեռ օձի, որ յանապատս Աֆրիկոյ բնակի՝ սպիտակ *ներգլխումն* ունենալով պուտ իբրեւ զխոյր իմն զարդարեալ, գորեկ ունելով զգլուխ եւ կարմիր գաչս» [ԲՀ, 1975, էջ 332]:

բ) *Ի դիր ունողաց* բառակապակցությունը, իբրև գլխաբառ, ունի երկար բացատրություն բառարանում, որում էլ գործածվել են լատինաբան ձևեր՝ *ենթակայոջացն* և *ներբոլորումն*¹³:

գ) *Նոյն ինքն* կապակցությունը բերվում է որպես գլխաբառ, որի բացատրությունն է՝ «դերանուն եւ բարդեալ *ի նոյնոյ* եւ յինքենէ» [ԲՀ, 1975, էջ 243]: Այն *ի* նախդրով և *նոյն* երրորդ դեմքի ցուցական դերանվան տրական հոլովով լատինաբան կազմություն է, նշանակում է «նույնից» (հմմտ. կից դրված *յինքենէ* «իրենից» ձևը):

դ) *Ենթակայ* բառի բացատրության մեջ գործածված է լատինաստիպ ներգոյական հոլովի *ենթակայում* «ենթակայի՝ ենթակա եղածի մեջ» ձևը. «որպէս թուղթս, *ենթակայում*՝ որպէս գիրս» և այլն [ԲՀ, 1975, էջ 89]:

Այսպիսով՝ «Բառգիրք հայոց»-ը իր կարևոր տեղն ունի ուշ միջնադարյան գրավոր աղբյուրների մեջ՝ հայերենի պատմության ուսումնասիրության համար: Նրանում դեռևս մնում են շատ հարցեր («մութ տեղեր»), որոնք հետազայում ևս կարող են ավելի լայն լինել ուշադրության առարկա հայերենի ոչ միայն բառաքնության, այլև առհասարակ բառապաշարի տեսանկյունից:

О НЕКОТОРЫХ ЛАТИНИЗИРОВАННЫХ ФОРМАХ В «АРМЯНСКОМ СЛОВАРЕ» ЕРЕМИИ МЕГРЕЦИ

Доктор филолог. наук В. Г. АМБАРЦУМЯН

В статье рассматриваются вошедшие в словарь такие слова и словоформы, которые свойственны латинизмам, разговорному (диалектному) варианту, являются иноязычными заимствованиями. Исследование подобных единиц важно для общей истории армянского языка.

¹³ Նույն տեղում, էջ 127:

**ON SOME LATINIZED WORD-FORMS IN THE
«ARMENIAN DICTIONARY» OF EREMA MEGRETSI**

Doctor of Philology V. G. HAMBARDZUMYAN

The “Armenian Dictionary” is remarkable in terms of the language of the original work. The article discusses borrowed words and word forms which come from the dialectical forms of the Armenian of those times and which are peculiar to the Latinized Armenian. For instance the Latinized forms are presented as headwords for entries as well as sometimes are used within the text. Such units in the dictionary are very important for the history of the Armenian language.

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Արդի լեզվաքաղաքականության, ինչպես նաև հայերենագիտության առաջնահերթ խնդիրներից է արևմտահայերենի պահպանության, ուսումնասիրության և զարգացման հարցը: Լինելով իր բնօրրանից զրկված և աշխարհով մեկ սփռված հայության տարբեր զանգվածների ընդհանուր հաղորդակցման լեզուն՝ արևմտահայերենը զրկված է միասնական գործառության ու զարգացման, կանոնարկման հնարավորություններից, ենթակա է այլ լեզուների տարաբնույթ ազդեցությունների և ստիպված է դիմակայել բազում մարտահրավերների: Միաժամանակ նոր սերնդի շարքերում հայախոսների թվի շարունակական նվազումը վտանգ է ներկայացնում ոչ միայն լեզվապահպանական, այլ նաև հայապահպանական առումներով: Մերօրյա արևմտահայերենի մասին ահա թե ինչ է գրում Ռ. Տեր-Մերկերյանը. «Արևմտահայ տարբերակով բոլոր հաղորդակցվողները երկլեզվանի են, և նրանց համար առաջին լեզուն ընդունող երկրի լեզուն է, որը ժամանակի ընթացքում իր ազդեցությունն է թողնում. դա առաջին հերթին ակնհայտ է հատկապես արտասանության մեջ (չնայած բառապաշարի վրա նույնպես այդ ազդեցությունը շոշափելի է): Այսպես, այսօրվա դրությամբ կարելի է զանազանել հունահային ամերիկահայից, ֆրանսահային պոլսահայից, արգենտինահային լիբանանահայից: Հեռու չէ այն ժամանակը, երբ կզանազանենք նաև ֆրանսահայերենը պոլսահայերենից, ամերիկահայերենը հունահայերենից,

լիբանանահայերենը իսպանահայերենից»¹: Այս իրողությունը նկատի ունենալով՝ ՀՀ Մփյուռքի նախարարության առաջարկով և ԳԱԱ նախագահության աջակցությամբ 2013 թ. Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ձևավորվեց արևմտահայերենի բաժին, որն իր առջև խնդիր է դրել ձեռնարկելու Մփյուռքի լեզվավիճակի համալիր ուսումնասիրություն և վերլուծություն, նպաստելու գրական արևմտահայերենի կանոնարկմանը, կազմելու արևմտահայերենի ամբողջական բառարան և ստեղծել ակադեմիական քերականություն, գիտականորեն կանոնարկելու գրական լեզվի երկու ճյուղերի տերմինաբանությունը և ուղղագրությունը, մշակելու արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարստացման ուղիները, նաև օգնելու Մփյուռքի հետ գիտակրթական կապերի ամրապնդմանը: Առաջադրված խնդիրները լուծելու համար լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինը համագործակցություն է ծավալում ինչպես ՀՀ Մփյուռքի նախարարության, վերջինիս ջանքերով երևանյան բուհերում ստեղծված արևմտահայերենի ուսումնասիրության կենտրոնների, այնպես էլ արտերկրի հայագիտական կենտրոնների ու հայերենագետների հետ:

Այս համատեքստում լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժինը ՀՀ Մփյուռքի նախարարության կողմից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրով տրամադրված ֆինանսական աջակցությամբ նախաձեռնել է Սիրիայի հայ համայնքում արևմտահայերենի արդի վիճակի ուսումնասիրությունը: Այդպիսով սկզբնավորվել է սփյուռքի լեզվավիճակի համալիր ուսումնասիրության գործընթացը, ընդ որում՝ նախ և առաջ Սիրիայի հայության լեզվի ուսումնասիրությունը պայմանավորված է և՛ վերջին շրջանում բարեկամ այդ երկրին ու նաև սիրիահայությանը պատուհասած ողբերգական իրադարձություններով, և՛ այն բանի հաշվառումով, որ սիրիահայությունը Մփյուռքի ամենահին համայնքներից է և համարվում է Մփյուռքի մայր գաղութ:

¹ Ռ. Տեր-Մերկերյան, Արդի հայերենի երկու տարբերակների փոխներգործության շրջանակները. – «Պատմաբանասիրական հանդես», 2007, N 1, էջ 91:

Հայ-սիրիական հարաբերություններն ունեն հազարամյակների պատմություն: Հայերը հոծ զանգվածներով այսօրվա Սիրիայի տարածք են եկել Հայաստանում արաբների տիրապետության ժամանակներից սկսած: Մինչև 1915 թ. Սիրիայում կային բազում բնակավայրեր, որոնցում հայերն ապրում էին դարեր ի վեր: Ըստ Սիմեոն Լեհացու՝ 1616 թ. Հալեպում կար 300 տուն հայ, իսկ ըստ Հ. Թովուզյանի՝ 1870-ական թթ. Սիրիայում ապրում էին 81 283 քրիստոնյա հայեր, ընդ որում՝ նրանք հիմնականում հաստատված էին Հալեպի սանջակում: Հալեպի հայությունը իր ծագմամբ միատարր չէր. հնօրյա հայերեն ձեռագրերն ու հիշատակարանները վկայում են, որ հալեպահայ համայնքը ձևավորվել է Ջուղայից, Երևանից, Արցախից, Էրզրումից, Երզնկայից, Բաղեշից, Մեհաստիայից, Ուրֆայից, Մալաթիայից, Սասունից, Արաբկիրից և այլ վայրերից եկած տարբեր զբաղմունքի տեր մարդկանցով: Սիրիայի արաբ ժողովուրդը բարյացակամորեն ապաստան տվեց նաև Եղեռնից մազապուրծ եղած հայության զանգվածներին: Սիրիական տարբեր քաղաքներում և հատկապես Հալեպում, այսպիսով, տարբեր ժամանակներում և տարբեր վայրերից եկած հայերը համատեղում էին տարբեր մշակույթներ ու բարբառներ, այդ ամենին ավելանում էր նաև արաբական մշակույթի և արաբերենի ազդեցությունը: Հայերը բնականաբար յուրացնում էին արաբերենը, սակայն այս կամ այն չափով պահպանում էին նաև մայրենին: Դեռևս 1868 թ. Հալեպ այցելած հայ մտավորականը գրել է, որ «հասարակաց լեզուն» արաբերենն է, բայց հայերը գիտեն հայերեն խոսել: Նկատվել է, որ Հալեպի խոսակցական հայերենում շատ մեծ քանակություն էին կազմում արաբական փոխառությունները: Սակայն հալեպահայերը աչքի էին ընկնում ազգային արժանապատվության և ինքնության գնահատման բարձր գիտակցությամբ և հետևողականորեն բարելավում էին հայերենի իմացության վիճակը: Այդ հարցում հատկապես մեծ նշանակություն է ունենում սիրիահայ դպրոցը, որը, 1920-ական թթ. սկսած՝ մոտ երկու տասնամյակում կարողանում է գրական արևմտահայերենը հայ հասարակության բոլոր շերտերի համար դարձնել հասարակական, ընդհանուր լեզու: Մի փոքր այլ էր իրավիճակը գյուղական բնակավայրերում, որոնցում հաճախ համախումբ ապրում էին նույն

ծագումն ունեցող հայեր՝ պահպանելով իրենց մայրենի բարբառները: Հ. Աճառյանը Անտիոքի շրջանի հայաբնակ գյուղերի խոսակցական լեզուն անվանել է *Սուրիոյ բարբառ*, իսկ Ա. Ղարիբյանն առանձնացրել է Սվեդիայի, Քեսապի և Բեյլանի բարբառները:

Միրիայում իրավիճակի կայունացումից և խաղաղության հաստատումից հետո միայն հնարավոր կլինի գնահատել հայության ժողովրդագրական և լեզվական ճշգրիտ վիճակը ներկայումս, սակայն Հայաստանում հանգրվանած սիրիահայերի հետ հանդիպումները, նրանց շրջանում կատարված հարցումները, բանավոր խոսքի գրանցումները որոշակի նյութ են տալիս՝ կատարելու Միրիայի հայ համայնքում արևմտահայերենի արդի վիճակի ուսումնասիրություն, վեր հանելու մեր ժողովրդի այդ հատվածի լեզվական որոշ առանձնահատկություններ:

ԳԱԱ լեզվի ինստիտուտի հետազոտողների խումբը (բ.գ.դ. Ռ. Թոխմախյան, բ.գ.թ., բ.գ.թ. Պ. Վարդապետյան, Ս. Տիոյան, Ա. Քարտաշյան և սիրիահայ գործընկերներ Հ. Մարաշլյան, Բ. Փանոսյան) դիտարկում է սիրիահայության լեզվի ինչպես հնչյունական կազմին, այնպես էլ ձևաբանությանն ու բառապաշարին վերաբերող հարցեր: Հնչյունաբանության ոլորտում փորձառական ուսումնասիրության են ենթարկվել և՛ ձայնավորական, և՛ բաղաձայնական համակարգերի որոշ իրողություններ: Այսպես, ձայնաբանական ուսումնասիրության է ենթարկվել վերջերս որոշ ուսումնասիրողների կողմից արևմտահայերենում իբրև *հ* կապակցության զարգացում արձանագրվող քմայնացած *ռ* հնչյունը: Սիրիահայ լեզվակիրների արտասանվածքի ձայնաբանական վերլուծությամբ պարզվել է, որ նրանց խոսքում *յռ* կապակցությունն ունի յուրահատուկ ֆիզիկական արտահայտություն, որտեղ քմայնության հատկանիշը չի ծավալվում *ռ* ձայնավորի ողջ սպեկտրապատկերում, որը թույլ չի տալիս տվյալ դեպքում խոսել *ռ*-ի ամբողջական քմայնացման մասին: Բաղաձայնական համակարգում լեզվակիրները նշում են *ր/ռ* հակադրության բացակայությունը: Իսկապես, այս հնչյուններից մեկի կամ մյուսի արտասանությունը իմաստային փոփոխության չի հանգեցնում: Սակայն կան դեպքեր, երբ, որպես կանոն հնչում է դրանցից մեկը (օրինակ՝ *ն*-ից առաջ որպես կանոն արտասանվում է *ռ*): Սիրիահայերի (հատկապես նոր սերնդի) խոսքում

առանձին դեպքերում նկատվում է նաև հպական ու հպաշփական բաղաձայնների եռաստիճան շարքի դրսևորում, որ պետք է համարել արևելահայերենի ազդեցություն:

Ի հայտ են բերվել որոշ յուրահատկություններ ձևաբանական համակարգում: Այսպես, ուսումնասիրողները նկատել են, որ արևմտահայերենում ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է երեք եղանակով (սեռական հոլովով և *մեջ* կապով, հայցականի ձևով, տրականով): Միրիահայերի խոսքում ներգոյականի իմաստն արտահայտելու ևս մեկ եղանակ կա՝ բացառական հոլովով և *ներս* կապով (Աշակերտները *դպրոցէն ներս* կազմակերպեցին աշնանային հանդէս): Հետաքրքրական է, որ եթե նախկինում (մոտ երեսուն տարի առաջ) իրար հաջորդող երկու սեռականների հոդ ատանալը սովորական էր (*անցեալին մշուշին մէջէն*), ապա ներկայումս առաջին սեռականի առանց հոդի կիրառությունն է ավելի սովորական (մայրիկի *դէմքին* վրայ): Միրիահայ խոսքում նկատելի է նաև հոլովական գուգաձևությունների առատությունը (*հոգիի/հոգւոյն, պատիւի/պատուի/պատուոյ, տարիի/տարւոյն/տարուան, շունի/շան, ծովի/ծովու, քաջութիւնով/քաջութեամբ, հորմով/հայրով, սուգի/սգոյ, անունի/անուան* և այլն): Բայական համակարգում նկատելի են երբեմն *է* և *ի* լծորդությունների մի քանի բայերի սխալ գործածության ձևեր՝ *ա* լծորդությամբ, ինչպես՝ *ելլալ* (փխ. *ելլել*), *հեծնալ* (փխ. *հեծնել*), *մտնալ* (փխ. *մտնել*), *երեւալ* (փխ. *երելիլ*), *թուալ* (փխ. *թուիլ*) և այլն:

Միրիահայ խոսակցական հայերենում զգալի թիվ են կազմում արաբերեն բառերն ու արտահայտությունները: Ընդ որում՝ բացի հայերենի այլ բարբառներում ևս հանդիպող գրեթե ընդհանուր բնույթ ունեցող փոխառություններից, այստեղ առկա է նաև մասնավոր բնույթ ունեցող զգալի մի բառաշեք:

Այս կարգի ուսումնասիրությունները զուտ լեզվաբանական հետաքրքրություն ներկայացնելուց բացի կարող են վեր հանել նաև արևմտահայերենի զարգացման միտումները տարբեր միջավայրերում, նախանշել գրական արևմտահայերենի կանոնարկման հնարավորություններն ու եղանակները, արևելահայերենի և

արևմտահայերենի՝ իբրև մեկ լեզվական ամբողջության միասնական զարգացման ուղիներն ու հեռանկարները:

СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКА В ОБЩИНЕ СИРИИ

Кандидат филолог. наук В. Л. КАТВАЛЯН

В статье с точки зрения лингвистических и экстралингвистических факторов исследуется языковая ситуация западноармянского языка на примере армянской диаспоры Сирии. Фактически материал представляется на основе общего диалектологического анализа, отмечаются возможности нормирования армянского литературного языка с точки зрения развития путей и перспектив двух ветвей последнего.

CURRENT STATE OF THE WESTERN ARMENIAN OF THE ARMENIAN COMMUNITY IN SYRIA

PhD V. L. Katvalyan

In this article on the example of the Armenian community in Syria the linguistic state of Western Armenian is discussed taking into consideration the linguistic and extra-linguistic factors. The factual material is presented by the general dialectological analysis. Also the possibilities of the regulation of literary Armenian are presented from the point of view of the development of two variants of the latter.

ԼԵԶՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ ԳԱՎթղթակից անդամ Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

1. Ազգային մշակույթի (ներառյալ լեզվական մշակույթի) տիպաբանական բնութագիրը մեր օրերում ձեռք է բերել որոշակի հրատապություն: Համաշխարհային մշակույթի կարևորագույն կառուցատիպերի (հունահռոմեական, եվրոպական, հնդկական, արաբական, կովկասյան, ամերիկյան և այլն) և զուտ հայկական մշակույթի (այդ թվում՝ լեզվական մշակույթի) տիպաբանական արժեքների հետևողական զուգադրությունը ի հայտ կբերի այն էական ընդհանրություններն ու առանձնահատկությունները, որոնք առկա են տվյալ ոլորտում: Վաղուց հասունացած խնդիր է ազգային մշակութաբանական տիպի ընդհանրական դիտարկումը՝ իր հիմնական բնութագրումներով և դարերի ընթացքում կրած էական փոփոխություններով: Այդ առումով խիստ կարևոր է լեզվական մշակույթի տիպաբանական քննությունը:

ա) Հանրալեզվաբանության և մշակութաբանության ոլորտում հսկայական նվաճումներ է արձանագրել ամերիկյան գիտությունը: Անհրաժեշտ է ինչպես ազգագրության, մարդաբանության, այնպես էլ հանրալեզվաբանության, լեզվամտածողության ոլորտներում, հենվելով ամերիկյան և եվրոպական գիտական մտքի՝ վերջին շուրջ կեսդարյա լուրջ նվաճումների վրա, կիրառել հայ ազգային մշակույթի բոլոր տարատեսակների քննության ասպարեզում Բ. Ուորֆի, Էդ. Սեյլիքի, Ջ. Գրինբերգի, Մ. Սվոդեշի և ուրիշների կողմից մշակված ճշգրիտ քանակական և որակական մեթոդները: Դրանց տեղայնացված

կիրառման առանձին փորձեր եղել են (հմմտ. Գ. Ջահուկյան, Է. Միրաքյան, Ա. Սարգսյան և այլք):

Մեր օրերում, սակայն, անհրաժեշտություն է առաջացել մշակութաբանական այլազան երևույթները դիտարկել ոչ թե մասնատված, տարանջատված, այլ համակարգային և կառուցվածքային փոխկապակցվածությամբ, ներքին առնչություններով և աղերսներով: Այդ նպատակին հասնելու համար համակարգչային տեխնիկայի կիրառման հնարավորությունները հսկայական են:

բ) Այդ ուղղությամբ վերջին տասնամյակում մեր կողմից հետևողականորեն դիտարկվել են լեզվական մշակույթի տիպաբանական դաշտերը, հատկապես քննության առարկա է դարձել հայ սփյուռքի լեզվատիպաբանական նկարագիրը՝ ի մասնավորի նպատակ ունենալով բացահայտելու ազգային-լեզվամշակութաբանական տիպի ընդհանրությունները (ունիվերսալիաները):

գ) Նախ հարկ է բնութագրել «սփյուռք» հասկացությունն ընդհանուր առմամբ և հայ սփյուռքը իր կառուցվածքատիպաբանական բնորոշ առանձնահատկություններով: Անգնահատելի է հատկապես նոր դարաշրջանում Հայ սփյուռքի խաղացած դերը ազգային մշակույթի պահպանման և զարգացման գործընթացում (Վենետիկ, Կ. Պոլիս, Մոսկվա, Փարիզ, Բեյրութ, Լոս Անջելես և այլն):

դ) Խիստ կարևոր է ազգային մշակույթի (ներառյալ լեզվական մշակույթի) ուսումնասիրության ասպարեզում համաժամանակյա և տարաժամանակյա մեթոդների հստակ տարբերակման անհրաժեշտությունը: Խոսքը առարկայական է դառնում հայ ազգային մշակույթի արդի փուլի դիտարկման հայեցակարգից: Հատկապես շեշտը հարկ է դնել նորագույն փուլում լեզվամշակութաբանական տիպում կատարված տեղաշարժերի վրա:

ե) Լեզվական մի շարք երևույթների քննության ժամանակ հաճախ հիմք են ծառայում դարասկզբի արևմտահայերենի կառուցվածքային հատկանիշները: Թեև Սփյուռքի պայմաններում տասնամյակներ շարունակ հետապնդվել է դարասկզբի գրական արևմտահայերենի կանոնական վիճակը պահպանելու, վերակրկնելու նպատակը, այնուամենայնիվ արևմտահայերենը, իր բնական զարգացմամբ գտնվելով

միանգամայն տարբեր լեզվական, քաղաքական, տնտեսական միջավայրում, հանրալեզվաբանական ամենաբազմազան մթնոլորտում, որոշապես հեռացել է դարասկզբի այդ «ստանդարտից»: Բնականաբար հարկ է պարզել, թե արդի արևմտահայերենն ինչ փոփոխությունների է ենթարկվել: Դրանց առարկայական քննությունը, զուտ հայերենագիտական առումից բացի, ունի նաև հանրալեզվաբանական որոշակի արժեք և նշանակություն:

զ) Փոփոխությունները որոշապես շոշափելի են արևմտահայերենի խոսակցական տարբերակում: Բարբառի և գրական լեզվի միջև վերջին երկու տասնամյակում ձևավորվել են հստակ խոսակցական ոլորտներ: Խոսակցական ոլորտներին բնորոշ շատ երևույթներ սկսել են աստիճանաբար ներթափանցել նաև գրական լեզվի բանավոր տարբերակ: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու արևմտահայերենի նորագույն շրջանի խոսակցական ոլորտները, պարզելու գրական գրավոր և բանավոր տարբերակների փոխհարաբերությունները, գրական լեզվի կանոնարկված վիճակի կրած փոփոխությունների աստիճանը և այլն:

է) Մեր կողմից տարբերակվում են արդի արևմտահայերենի հետևյալ խոսակցական ոլորտները. 1) Միջին և Մերձավոր Արևելքի ոլորտ (Թուրքիա, Լիբանան, Սիրիա և հարակից որոշ շրջաններ), 2) Հունական ոլորտ (Հունաստան, Կիպրոս), 3) Ֆրանսիական ոլորտ (Ֆրանսիա, ինչ-որ չափով ֆրանսիական նախկին գաղութներ), 4) Անգլաամերիկյան ոլորտ (Անգլիա, ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա), 5) Հարավամերիկյան կամ իսպանական ոլորտ (Արգենտինա, Բրազիլիա, Բոլիվիա և այլն):

ը) Հասկանալի պատճառներով Պարսկաստանն այդ ոլորտներից դուրս է (այն արևելահայերենի տարբերակ է):

Արևմտահայերենի՝ դարասկզբի բոլոր վիճակների (խոսակցական, գրական տարբերակների) երևույթները համեմատաբար որոշ չափով անխառն ձևով պահպանվել են Միջին Արևելքի ոլորտում: Լինելով պատմական Հայաստանի տարածքում կամ մերձակից վայրերում՝ արևմտահայերենի խոսակցական վիճակը այդ ոլորտում կրել է արաբերենի ազդեցությունը, մինչ այդ եղած թուրքաբանությունների աստիճանական նվազմամբ: Արաբաբանությունները տեղ են գտել

բառապաշարում, դարձվածաբանության մեջ: Տվյալ տարածքի պաշտոնական-պետական լեզվի (արաբերենի) ազդեցությունը հայերենի վրա Միջին Արևելքի ոլորտում մյուս ոլորտների համեմատությամբ ամենանվազ շոշափելին է: Ըստ այդմ, եթե մյուս ոլորտները կարելի է դիտել իբրև ներփակ վիճակ տարածքային սահմանափակ ընդգրկման հատկանիշով, ապա տվյալ դեպքում ազդեցության ոլորտը սահմանագատելի չէ:

թ) Արևմտահայերենի խոսակցական ոլորտների առանձնացումը կատարված է ոչ թե սուկ աշխարհագրական հատկանիշով, թեև վերջինս, անշուշտ, վճռական դեր է խաղում, այլ ըստ լեզվական ներգործության: Այսպես, Կանադայում, Շվեյցարիայում և մի շարք այլ վայրերում առկա են միաժամանակ մի քանի լեզվական ազդեցություններ՝ ինչպես անգլերենի, այնպես էլ ֆրանսերենի և այլն: Ուստի որոշ չափով վիճելի է Կանադայի ոլորտ առանձնացնելու հարցը, անգլերենի բացահայտ ներգործության պայմաններում այնտեղ առկա են նաև այլ լեզուների (օր.՝ ֆրանսերենի) և հատկապես արևելահայերենի պարսկահայ տարբերակի ազդեցությունները:

ժ) Արտագաղթի ներկա պայմաններում առաջացել է լեզվաբանական առումով հետաքրքիր մի հարց ևս՝ Միյուռքի նշված ոլորտներում արևելահայ և արևմտահայ խոսակցական վիճակների փոխազդեցության հարցը: Մի շարք կրթարաններում պարսկահայերը և նախկին հայաստանաբնակ հայերը պահանջում են արևելահայերեն դասավանդել: Առաջանում են հանրալեզվաբանական քննությանն արժանի երևույթներ:

ժա) Նշենք մի քանի հնչյունական առանձնահատկություններ՝ ըստ առանձին ոլորտների, իբրև լուսաբանություն արևմտահայերենի արդի վիճակում կատարված փոփոխությունների: Այսպես, անգլաամերիկյան ոլորտում առաջացել է անգլերեն փակ *a*-ին համապատասխան մի հնչյուն՝ հայերենի *ա*-ին ոչ բնորոշ ռնգայնության և լարվածության հատկանիշներով: Անգլերենի թողած ազդեցությունը շոշափելի է շեշտի և հնչերանգի վրա: Շեշտի նախավերջին վանկ տեղափոխելը համապատասխան արտաբերական լարվածությամբ և հնչյունական թուլացմամբ անգլաամերիկյան ոլորտին բնորոշ առանձնահատկություն է՝ Հակոբյան, Սարգիսյան, Ջամբաճյան: Արևմտահայ գրական լեզվին ոչ

բնորոշ նման շեշտադրությունը ունի ոչ թե սոսկ սուբյեկտիվ երանգավորում, այլ տվյալ լեզվաոլորտը բնութագրող հատկանիշի արժեք:

ժբ) Երկշարք բաղաձայնների դիմաց հունակիպրական ոլորտում առկա է եռաշարք համակարգ՝ պարզ խուլերի ավելացմամբ (*պ/տ/կ*): Այդ ոլորտում հունարենին հատուկ մեղեդայնությունը այնքան է ազդել խոսակցական արևմտահայերենի վրա, որ միայն նախադասության ելևէջով կարելի է որոշել խոսողի հունահայ լինելը: Այդ նույն ոլորտում *ր/ռ* հնչույթային հակադրությունը որոշապես թուլացել է. մի երևույթ, որ բնորոշ է նաև այլ ոլորտներին՝ տարբեր չափերով: Եթե Միջին Արևելքի ոլորտում հնչույթային հակադրության թուլացմամբ *ր*-ն հաճախ հնչվում է իբրև *ռ* (*ռ*-ի դիրքային տարբերակ), ապա հունահայ ոլորտում հակառակն է տեղի ունեցել (*ռ*-ն է դիտվել իբրև *ր*-ի դիրքային տարբերակ). *ր/ռ* հնչույթային հակադրության խնդրում ներկայումս առաջացել է նոր վիճակ. եթե անգլաամերիկյան ոլորտում նշված միավորները սկսել են բնութագրվել թույլ արտաբերմամբ, ապա ֆրանսիական ոլորտում (հատկապես նոր սերնդի արտասանության տվյալներով) *ր*-ի հնչումը «մոտեցվել» է *ռ*-ին՝ ֆրանսերենին հատուկ արտաբերության ազդեցությամբ:

ժգ) Հայտնի է, որ գրական արևմտահայերենում *զ/ք* հնչյունները սովորաբար քմայնացած չեն, սակայն ֆրանսահայ ոլորտում նշված հնչյունները որոշ քմայնացման ենթարկվել են (ընդ որում ավելի քան արևելահայերենի համապատասխան հնչյունները՝ այսպես ասած «քաղցրավենիքային» արտաբերությամբ):

ժդ) Արևմտահայերենի խոսակցական ոլորտում աստիճանաբար առաջանում են «նստվածքային» մի շարք շերտեր՝ բնաշխարհիկ, հաճախ բարբառային հնչյունական առանձնահատկություններով բնութագրվող շերտին, որ կրում էր բնիկ հայկական արտասանական յուրահատկությունները, ավելանում է տվյալ լեզվական միջավայրի լեզվաոլորտի հիմնական, գերիշխող լեզվի ազդեցության շերտը՝ դրան գումարած անգլերենի աստիճանաբար ուժեղացող, հարաճուն ազդեցության հետևանք հանդիսացող շերտը և այլն:

Այդ ազդեցությունները հաճախ վերաբերում են վերհատույթային միավորներին՝ հնչերանգ, շեշտ և այլն: Համապատասխան ձևավորված երևույթները աստիճանաբար խոսակցական ոլորտներից թափանցում են գրական լեզու: Հարկ է ուսումնասիրել ոչ միայն այս կամ այն երևույթի առկայություն/բացակայությունը, այլև վիճակագրական (քանակական) արժեքները: Արևմտահայերենի խոսակցական ոլորտների բառապաշարը նկատելի փոփոխության է ենթարկվել: Կարելի է ասել, որ դարասկզբի արևմտահայերենի համեմատությամբ փոխվել է փոխառությունների աղբյուր հանդիսացող լեզուն: Եթե արևմտահայերենի ձևավորման կանոնարկման շրջանում այդ լեզուն ֆրանսերենն էր, ապա ներկայումս անժխտելի է, որ այդ դերը, ինչպես նշվել է վերը, ստանձնել է անգլերենը:

2. Ըստ ոլորտների բառապաշարին են անցնում տվյալ գերիշխող լեզվական միջավայրի ամենահաճախական բառերն ու արտահայտությունները, դարձվածքները: Բարբառից խոսակցականին անցած երևույթները, թրքաբանությունները «փոխարինվում» են ժամանակակից գիտատեխնիկական իրադրությունն արտացոլող օտարաբանություններով՝ *աքսիդան, թրաֆիկ, փարքինգ, օթո, բաթալ, սքեչ, քենսըլ, օնլայն, փլանշեթ* և այլն:

3. Որպես իրողություն պետք է արձանագրել Մփյուռքի ոլորտների ներուժի խիստ անբավարար օգտագործումը ոչ միայն զուտ ազգային գաղափարախոսության ձևավորման, այլև մշակութաբանական տիպի հետագա պահպանման և զարգացման ասպարեզում: Ունենալով այնպիսի բացառիկ մի հնարավորություն, ինչպիսին Հայ սփյուռքն է, ազգային մշակույթը ձեռք է բերում բացառիկ հնարավորություններ և նպաստում է միջազգային մշակութաբանական զարգացմանը համընթաց քայլելուն: Այդ ուղղությամբ հսկայական անելիքներ ունեն զանգվածային լրատվամիջոցները, հատկապես հեռուստաալիքները:

4. Վաղուց հասունացել է ժամանակը Մփյուռքը դիտարկելու իր տիպաբանական էական հատկանիշներին խարսխված կառուցատիպերով և ոչ թե կտրտված, ոչ էական տեղային և մասնավոր երևույթներով: Լեզվական մշակույթը այն գերիզուր ազդակն է, որ կարող է (և պետք է) մի կողմից՝ հեռու պահել ներազգային նկարագրերի ծիրի մեջ պարփակվելուց՝ նպաստելով համաշխարհային մշակույթի

ձեռքբերումների արագ և խորքային յուրացմանը, մյուս կողմից՝ պատնեշ դառնալ ազգային մշակույթի ավանդական կառուցատիպի արագ խաթարմանն ու քայքայմանը, նպաստող երևույթների դեմ, որը ուրվագծվում է այսօր գոնե մասնակիորեն:

Լեզվական մշակույթի և սփյուռքի փոխազդեցությունների, ներքին հնարավորությունների և զարգացման հեռանկարների գիտական դիտարկումը մեծապես կնպաստի տակավին նոր ձևավորված սփյուռքագիտության ստեղծմանը, որի բաժիններից մեկը վստահաբար նվիրված պետք է լինի Հայ սփյուռքի լեզվամշակութային տիպաբանական փոխհարաբերության խնդիրներին:

ТИПОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ЯЗЫКОВОЙ КУЛЬТУРЫ

Член– корреспондент НАН РА А. Е. Саргсян

Автор статьи считает, что научное рассмотрение языковой культуры и взаимоотношений диаспоры, внутренних возможностей и перспектив развития будет способствовать созданию формирующейся науки о диаспоре, один из разделов которой должен быть посвящен вопросам типологических взаимоотношений языковой культуры армянской диаспоры.

TYPOLOGICAL CHARACTERISTICS OF LANGUAGE CULTURE

Member corresp. of the NAS RA A. E. SARGSYAN

The author thinks that the scientific observation of the relation of linguistic culture and diaspora, inner opportunities and the perspectives of development will greatly contribute to the establishment of newly formulated diaspora studies, one part of which will be devoted to the problems of linguistic typological interrelations of the Armenian diaspora.

ԳՐԱԲԱՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կայուն կապակցությունները (այսուհետև՝ ԿԿ) մասամբ կամ ամբողջովին վերախմաստավորված կամ նոր իմաստավորում չունեցող պատրաստի կառույցներ են, որոնք, որպես շարահյուսական յուրահատուկ միավորներ, հանդես են գալիս կա՛մ բառակապակցության, կա՛մ նախադասության կառուցվածքի կաղապարով: Դրանք մի դեպքում հատկանշվում են անվանողական արժեքով, իսկ մյուս դեպքում՝ նախադասության հաղորդակցական գործառնություն¹: Անվանողական կամ հաղորդակցական ԿԿ-ները հարաբերակից են բառաբերականական կարգերին՝ խոսքի մասերին: Հայերենում ըստ քերականական-ձևաբանական դասակարգման առանձնացվում են գոյականական, ածականական, բայական, մակբայական և եղանակավորող տեսակներ, ընդ որում բացի բայից, դրանք դասվում են անվանական կապակցությունների շարքը²:

Ընդհանրապես ԿԿ-ների դեպքում տարբերակայնությունը ի հայտ է գալիս հատկապես արտահայտության պլանում, թեև տարբերակների շարքում կարևոր է իմաստի նույնականության պահպանումը³: Հայտնի է

¹ Հմմտ. Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 5, 180: Խ. Գ. Բադիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 91, 293, Ա. Դ. Назарян, Фразеология современного французского языка, М., 1987, էջ 60:

² Հմմտ. Խ. Գ. Բադիրյան, նշվ. աշխ., էջ 91: Ս. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 313:

³ Հմմտ. Л. Д. Игнатьева, Структурные и семантические свойства фразеологических единиц с фразообразующим компонентом “как” в современном русском языке (автореферат канд.

նան, որ դրանք դարձվածային միավորների տարատեսակներ են, գրեթե նույնական են իրենց իմաստներով, ոճական և շարահյուսական դերով, ունեն բառային ընդհանուր անփոփոխակ՝ բառային կազմի, բաղադրիչների քանակային (նաև շարադասական) ակնհայտ տարբերությամբ⁴:

Ուշագրավ է, որ դարձվածային տարբերակները դարձվածային հոմանիշներից առանձնացնելու հիմնական սկզբունքը դարձվածային միավորի կառուցվածքային նույնականության պահպանումն է. դարձվածային տարբերակներն ունեն ձևային միևնույն անխախտելի հիմքը⁵:

Դարձվածային միավորների շրջանակներում ի հայտ եկող տարբերականության վերաբերյալ վերը բերված դիտարկումները հատկանշական են ԿԿ-ների համար ընդհանրապես, գրաբարի անվանողական ԿԿ-ների համար մասնավորապես:

Սույն հոդվածում քննարկվում են անվանողական ԿԿ-ների շրջանակներում առանձնացվող անվանական, տվյալ դեպքում՝ գոյականական և ածականական ԿԿ-ների տարբերակները գրաբարի մակարդակում համաժամանակյա կտրվածքով⁶: Առանձին-առանձին դիտարկվում են հին հայերենի անվանական ԿԿ-ների բառային, քերականական (ձևաբանական ու շարահյուսական) և քանակային տարբերակները՝ վերջիններիս առումով կարևորելով համատեքստի դերը. հատկապես խոսքային միջավայրում են առավել ցայտուն դրսևորվում ԿԿ-ների տարբերակների կառուցվածքային համապատասխանությունը և իմաստային նույնականությունը: Ընդ որում՝ մենք ընդգրկել ենք ինչպես գրաբարյան վերաիմաստավորված, այնպես էլ ոչ փոխաբերական նոր իմաստավորում ունեցող ԿԿ-ների տարբերակները:

дисс.), Ленинград, 1976, էջ 7–8: В. М. Мокиенко, Славянская фразеология, М., 1989, էջ 26:

⁴ Տե՛ս А. В. Кунин, Англо-русский фразеологический словарь, М., 1967, էջ 1250, Английская фразеология, М., 1970, էջ 62:

⁵ Հմմտ. Н. В. Соколова, Варианты узуальных фразеологизмов в произведениях Ю. Бондарева (Сб. «Проблема тождества фразеологических единиц», Челябинск, 1990, էջ 2–3):

⁶ Տե՛ս Լ. Սվետիցյան, Գրաբարի բայական դարձվածային միավորների տարբերակները («Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2012, էջ 5–13):

Ա. Բառային (հոմանշային) տարբերակներ: Գրաբարի քննվող ԿԿ–ների տարբերակների յոթանասուն տոկոսից ավելին կազմում են հենց այդօրինակ փոփոխակները, որոնք դուրս չեն գալիս ԿԿ–ի տվյալ իմաստի շրջանակներից: Ըստ որում՝ ԿԿ–ների՝ խնդրո առարկա տարբերակներում բառային փոփոխակները կարող են լինել՝ 1. հոմանիշներ, 2. իմաստային միևնույն դաշտին, իմաստային (թեմատիկ) միևնույն խմբին պատկանող բառեր, 3. իմաստային առնչակցություն չունեցող բառեր⁷:

Ընդհանրապես յուրաքանչյուր ԿԿ այս կամ այն խոսքի մասին հարաբերակցվում է առաջին հերթին իր արտահայտած իմաստով:

Գոյականի արժեք ունեցող ԿԿ–ների գերադաս անդամը գոյական է կամ փոխանվանաբար (գոյականաբար) գործածված այլ խոսքի մաս: Այդ կարգի ԿԿ–ներն արտահայտում են հասկացություն:

Ածականական ԿԿ–ները հարաբերակից են ածականներին կամ ածականների դերում հանդես եկող այլ խոսքի մասերի: Խնդրո առարկա ԿԿ–ները կարող են կազմվել նաև առանց ածականների մասնակցության⁸:

Դիտարկենք անվանական ԿԿ–ների բառային տարբերակներն առանձին–առանձին:

1. Կապակցությունների գերադաս անդամների փոփոխությունների հետևանքով առաջացած բառային տարբերակներ:

ա) Գոյականական ԿԿ–ների տարբերակները: Գրաբարյան նման ԿԿ–ների այսօրինակ այլաձևություններում փոփոխակները հիմնականում հոմանիշներ են: Հմմտ. *ատեան/հանդէս հարցափորձի (հրապարակային հարցուփորձի տեղ, դատական դահլիճ), դէն/օրէնք մագդեզանց (գրադաշտական կրօն, կրակապաշտություն), շտապ/խուճապ տագնապի (սաստիկ իրարանցում): Այս կարգի տարբերակները երկձևություններ կամ զուգաձևություններ են: Հմմտ. Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչեւ գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դէռ եւս քաջ քաջ ի փախուստ դառնային (Եղ., V յեղ.): Եւ սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկէլոց (ն. տ.):*

⁷ Տե՛ս *Հ. Բ. Соколова*, նշվ. աշխ., էջ 2–3: *В. М. Мокненко*, նշվ. աշխ., էջ 32, 34, 36:

⁸ Հմմտ. *Խ. Գ. Բաղդիկյան*, նշվ. աշխ., էջ 128:

բ) Ածականական ԿԿ-ների տարբերակներն առաջանում են թե՛ տվյալ կապակցության այս կամ այն բաղադրիչը որևէ հոմանիշով փոխարինելով և թե՛ ԿԿ-ների բաղադրիչները փոխարինելով այնպիսի բառերով, որոնք արտահայտում են իմաստային միևնույն դաշտի հասկացություններ կամ պատկանում են իմաստային-թեմատիկ միևնույն խմբին⁹: Հետևյալ տարբերակները կազմվել են գերադաս ածականական բաղադրիչների հոմանշային փոփոխակներով. տրտում/անմխիթար մինչեւ ի մահ (չափազանց տխուր, անսփոփ), հատու/սուր քան զամենայն սուր երկսայրի (խիստ սուր՝ հատու), քաջ/արի քան զԱքիլէս (չափազանց քաջ՝ արի), իբրև զաւագ ծովու անչափ/անթիւ/բազում (խիստ շատ, անհամար): Հմմտ. տարբերակային ԿԿ-ի գերադաս բաղադրիչի հոմանշային փոփոխակները միևնույն համատեքստում. Եւ էր թիւ որդւոցն Իսրայելի իբրև զաւագ ծովու անչափ և անթիւ (Ովսէ, Ա. 10):

2. Կապակցությունների ստորադաս կամ կախյալ բաղադրիչների փոփոխությունների հետևանքով առաջացած բառային տարբերակներ:

ա) Գոյականական ԿԿ-ների տարբերակները: Սրանցում նույնպես փոփոխակներն ունեն իմաստային առնչություններ. կա՛մ հոմանիշներ են, կա՛մ բովանդակում են իմաստային միևնույն դիտվածքի (դաշտի) հասկացություններ:

Հոմանիշ կամ նույնանիշ բառերի փոփոխումով են ձևավորվել գոյականական ԿԿ-ների հետևյալ տեսակները. աչք հոգւոյ/մտաց (հոգու՝ մտքի աչքեր), մայր արեգական/արևու (արեգակի մայր մտնելու տեղը. արևմուտք), օրէնք մագդեգանց/մոգուց (գրադաշտական կրոն):

Ստորև բերվող ԿԿ-ների ստորադաս բաղադրիչների բառային փոփոխակներն ազատ կիրառություններում չունեն հոմանշային հարաբերություններ, սակայն արտահայտում են իմաստային միևնույն դաշտի հասկացություններ. Մթերք ոսկւոյ/արծաթի (գանձարան), տապանակ ուխտի/վկայութեան (եբրայեցիների մեջ՝ անփուտ փայտից շինված արկղ, որի մեջ պահում էին իրենց նվիրական սրբությունները՝

⁹ Հմմտ. *գառ ի կող/ի թափ/ի վայր* (գառիվայր. թեք՝ շեղակի դիրք՝ տեղ. դարավանդ) տարբերակները ցուցաբերում են խոսքիմասային ածական/մակբայ երկարժեքություն (տե՛ս Լ. Մ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան (Ձևաբանորեն տարարժեք բառեր), Ե., 2003, էջ 124):

տասնաբանյա տախտակները, ոսկե սափորը և Աբրահամի ծաղկած գավազանը), բան Հօր/սուրբ հոգւոյն/փրկչին (Աստծո խոսքի մարմնացումը, Աստծո միածին որդին, Քրիստոս):

Այսպէս նաև՝ ստորադաս բաղադրիչների փոփոխականությունն ցուցաբերող ԿԿ–ները խոսքային միջավայրում. Ընդ նոյն ժամանակս խորհուրդ ի մէջ առեալ Շաւասպ Արծրունի եղբայր Վասակայ հօր Աղանայ Արծրունոյ, եւ խորհեցաւ զտիրելն Հայոց, եւ ելեալ գնաց զհետ անհանճար իմացմանց առ Պերոզ արքայ Պարսից, եւ յանձն առեալ ինքնական մոլորութեամբ զօրէնս մագդեգանց մոխրապաշտ յամառութեանց, եւ խնդրեալ յարքայէ զիշխանութիւն Հայոց (Թովմ. Արծ., 124): Քանզի ի բառնալ ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարեր զիր իշխանութիւնն օրինօք մոգուց.... (Եղ., I):

բ) Ածականական տարբերակները ստորադաս բաղադրիչների հոմանշային փոփոխակներ են. *հարուստ/բուռն ոսկերօք* (ուժեղ, ամրակազմ, կորովի), *յաղթ (յաղթանդամ)/բուռն մարմնով* (հաղթանդամ, ուժեղ) և այլն¹⁰: Հմմտ. ստորադաս անդամների փոփոխմամբ կազմված հետևյալ ԿԿ–ները, որոնց տարբերակային բաղադրիչներն արտահայտում են իմաստային միևնույն դաշտի հասկացություններ. անցեալ զաւուրքք/զժամանակօք (շատ ծեր), հակառակ որպէս սպիտակ թխոյ/քաղցր դառին (չափազանց հակառակ, հակադիր), քան զեզն/զեշ պակասամտազոյն (սաստիկ հիմար, պակասամիտ), սպիտակ որպէս զձին/զասր//զլոյս/զկաթն (խիստ սպիտակ), բազում իբրև զաստեղս/զմայրսն Լիբանանու/զաւագ ծովու (խիստ շատ, անթիվ, անհամար): Հմմտ. ածականական ԿԿ–ների՝ խնդրո առարկա բառային տարբերակները խոսքային միջավայրում. Գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով եւ վիրխարիք (Խոր., 31): Եւ էր սա այր անհեղեղ անձամբ, եւ բուռն եւ ցամաք մարմնով (Սեբ., 56): Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձս և այլ ուժով պնդութեան, հարստութեամբ, բուռն ոսկերօք և յաղթ մարմնով (Ագաթ., 78):

¹⁰ Հմմտ. յաղթ *մարմնով/անդամով* տարբերակներում առկա են միաժամանակ բառային և քերականական–ձևաբանական (թվի) զուգաձևություններ:

Բ. Ձևաբանական և շարահյուսական տարբերակները գրաբարում սակավադեպ են¹¹: Առաջին տիպի փոփոխակումը գրաբարի անվանական ԿԿ-ներում մեծ մասամբ կապված է հոլովի և թվի զուգաձևության հետ:

1. Հոլովական տարաձևությամբ (հոլովիչի տարբերակմամբ) ԿԿ-ներ:

ա) Գոյականական ԿԿ-ների զուգաձևություններ. մեջ գիշերի/գիշերոյ (կեսգիշեր):

բ) Ածականական ԿԿ-ների զուգաձևություններ. արեան/արեամբ չափ, մահու/մահում արեալ չափ (շատ մեծ՝ ծանր), ազգ ազգ/ազգի ազգի (տեսակ-տեսակ, զանազան): Հմմտ. Ազդ եղեւ մեծին Տիգրանայ պատրաստ պնդութիւն Աշդահակայ. եւ ժողովեալ ազգք ազգք յընտրելոց զօրավարաց արանց քաջամարտկաց ամենայարդար պատրաստութեամբ անհուն բազմութեամբ, աճապարեալ երագել անյապաղ լինել նախ քան զԱշդահակայ դիմեցումն, զի մի քաջասրտագոյն կարծիցի Մարն քան զՀայկազնեայն (Թովմ. Արծ., 62): Ջանայր ազգի ազգի հնարիւք (Եղ., 196):

2. Կա՛մ գերադաս, կա՛մ ստորադաս բաղադրիչների եզակի-հոգնակի ձևերով հանդես եկող տարբերակային ԿԿ-ներ: Հին հայերենի անվանական ԿԿ-ների այսօրինակ այլաձևություններում թվի քերականական կարգի նշանակությունը չի պահպանվում. եզակի-հոգնակի ձևերն իմաստային և քերականական առումներով չեզոք են մնում:

ա) Գոյականական ԿԿ-ների զուգաձևությունները. բազում կոյս կոյս/կոյսս կոյսս (զանազան կողմեր), կեանք յաւիտենական/յաւիտենականք (հավիտենական կյանք. անմահություն):

Թվային և հոլովական տարբերակայնություն. մայր եկեղեցի/եկեղեցեաց (զլխավոր՝ աթոռանիստ եկեղեցի), որդի մարդոյ/մարդկան (մարդ արարած, բանական էակ):

Բառային (հոմանշային) և ձևաբանական (թվային) զուգաձևություններ են՝ աչք հոգւոյ/մտաց (հոգու՝ մտքի աչքեր) տարբերակները: Հմմտ. Զբազում կոյս կոյս/կոյսս կոյսս հարկանէր մեծաւ պատերազմաւ (ԱԲ, 51):

¹¹ Սովորաբար առանձնացվում են մի քանի տարբերակներ՝ ձևաբանական-հնչյունական, զուտ ձևաբանական, ձևաբանական-ռճական, ձևաբանական-շարահյուսական, ձևաբանական-կետադրական: Տե՛ս Զ. Խ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007, էջ 133:

Ոչ կարել որդի մարդոյ յանձնէ առնել և ոչ ինչ: Այլ տեսիլ նորա անարգ, նուագեալ քան զամենայն որդւոց մարդկան (Ղեւ., 739):

բ) Ածականական ԿԿ–ների զուգաձևություններում հազվադեպ են գուտ թվի զուգաձևությունն դրսևորողները: Օրինակ՝ բազում իբրև զաւազ (ծովու)/զաստեղս (չափազանց շատ) տարբերակային ԿԿ–ները:

Ածականական ԿԿ–ների տարբերակներ են ի հայտ գալիս նաև ածականական և դերբայական գերադաս բաղադրիչների փոփոխությամբ. հմմտ. հատու/ազդող քան զամենայն սուր երկսայրի (խիստ սուր՝ հատու), լի/անցեալ զաւորքք (տարիքն առած, շատ ծեր) և այլն:

Շարահյուսական տարբերակներն անվանական ԿԿ–ներում առաջանում են կա՛մ բաղադրիչների, կա՛մ ողջ կառույցի շարադասական փոփոխություններով:

ա) Գոյականական ԿԿ–ների զուգաձևություններն իրենց իսկ բաղադրիչների շարադասական փոփոխությունների հետևանք են. *կցորդ արեան/արեան կցորդ* (արյունակից՝ ազգական), *զարդ կայսերական/կայսերական (կայսերակերպ) զարդ* (կայսերական զարդ. թագավորական նշան)¹²: Հմմտ. Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս, եւ զարդարեցին զՏրդատիոս ի զարդ կայսերական արկեալ զնովաւ զնշան թագաւորութեանն (Ագաթ., Դ):

բ) Ածականական ԿԿ–ների շարահյուսական տարբերակներ առաջ են գալիս բաղադրիչների շարադասական փոփոխություններով. իբրև զմարգարիտ պատուական/իբրև զպատուական մարգարիտն («խիստ հարգելի, պատվարժան»), քաղցր քան զմեղու խորիսխ/քաղցր քան զխորիսխ մեղու («շատ քաղցր՝ անուշ»). այլն՝ ողջ կառույցի ձևափոխությամբ. քաղցր իբրև զմեղր/նման քաղցրութեան մեղու («շատ քաղցր») և այլն: Հմմտ. Բերէին ... զսպիտակ իբրև զձիւն հանդերձանս (Ագաթ., 395): Եւ փաղփաղէր մարմինն ի բարձուէն զոր օրինակ ձիւն սպիտակութեամբն (Բուզ., IV, ԾԹ):

Գ. Քանակային տարբերակներում կապակցությունը փոխվում է քանակային կազմով՝ պահպանելով իմաստային նույնականությունը:

¹² Սրանք միաժամանակ բառային–բառակազմական և շարադասական տարբերակներ են:

Նման փոփոխականներն առաջանում են քանակային կազմի կրճատումով կամ ծավալումով:

Այս առումով ուշագրավ է դարձվածաբանական գրականության մեջ առկա հետևյալ դիտարկումը. «Քանակային տարբերակայնությունը սերտորեն կապված է դարձվածքի բաղադրամասային կազմի հետ. որքան շատ բաղադրիչներ կան տվյալ դարձվածքի կազմում, այնքան մեծ է նրա տարբերակայնության հնարավորությունը»¹³:

ա) Գոյականական տարբերակներն ունեն վերացականի և կոնկրետի, ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերություն: Հմմտ. Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչեւ գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ եւս քաջ քաջ ի փախուստ դառնային (Եղ., V):

բ) Ածականական տարբերակներն ունեն մասի և ամբողջի՝ քաղցր քան զմեղր/զմեղու խորիսխ («շատ քաղցր»), ընդհանուրի և մասնավորի, վերացականի ու կոնկրետի փոխհարաբերություն: Հմմտ. Վասն զի սեգ իսկ էր առ հանդերձս եւ այլ ուժով պնդութեան, հարստութեամբ, բուռն ոսկերօք եւ յաղթ մարմնով (Ագաթ., 78): Ապա զի էր ինքն Դղակն այր մեծ եւ անձնեայ, քաջ հարուստ ոսկերօք (Բուզ., 172):

ВАРИАНТЫ НОМИНАТИВНО УСТОЙЧИВЫХ СОЧЕТАНИЙ В ГРАБАРЕ

Кандидат филолог. наук Л. АВЕТИСЯН

Среди номинативно устойчивых сочетаний (УС) грабара различаются семантически переобразованные или непереосмысленные сочетания. В частности, имеются следующие варианты: лексические (դեն/օրէնք մազդէզանց/մոզուց [dēn/orēnk^c mazdezanc^c/moguc^c]), морфологические (կէանք յաւիտենական/յաւիտենականք [keank^c yawitenakank^c/yawitenakank^c], синтаксические (զարդ կայսերական/կայսերական զարդ [zard kayserakan/kayserakan zard]) и количественные (квантитативные – քան

¹³ Տե՛ս Լ. Ժ. *Игнатьева*, Количественное варьирование во фразеологических единицах с компонентом “как”, “хоть”, “если” (Сб. Проблема тождества фразеологических единиц, էջ 87):

Աստուծոյ/էական [ban Astucoy/ēakan]). Вариантная УС входит в язык как совокупность своеобразных вариантов.

THE VARIANTS OF NOMINATIVE STABLE COMPOUNDS OF OLD ARMENIAN

PhD L. AVETISSYAN

Among nominative stable compounds (SC) of Old Armenian semantically transfiguratively) or non – metaphorical SC are distinguished. The substantival and adjectival SC of Old Armenian have different variants: lexical (դեն/օրէնք մազդէականց/մոզուց [dēn/orēnk^c mazdezanc^c/moguc^c], grammatical (morphological – կեանք յաւիտենական/յաւիտենականք [keank^c yawitenakank^c], syntactical – զարդ կայսերական/կայսերական զարդն [zard kayserakan/kayserakan zard]) and quantitative – բան Աստուծոյ/էական [ban Astucoy/ēakan]. The variant SC enters into the language as oneness its variants.

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

XX դ., որն իրավամբ համարվեց թարգմանության ժամանակաշրջան, հրամայական դարձրեց թարգմանության տեսության առկայացումը: Ինչպես վկայում են մշակույթի պահպանված հուշարձանները, թարգմանության պատմական արմատները ձգվում են շատ հեռու՝ մինչև վաղնջական ժամանակներ:

Կղզիացած մշակույթները, իբրև քաղաքակրթական երևույթ, որքան էլ որ առաջավոր լինեն, դատապարտված են աղճատման, հաճախ և կործանման: Դեռևս Ք.ա. XIII դ. խեթերը թարգմանեցին «Գիլգամեշ» պոեմը: Անհնար է խոսել թարգմանության մասին՝ շրջանցելով աստվածաշնչյան գրվածքները: Բաբելոնի աշտարակը բառերից ստեղծված դիցաբանություն է: Ելից գրքում (11, 9) կարդում ենք. «Եհովան այնտեղից նորանց ցրուեց բոլոր երկրի երեսի վերայ, և քաղաքը շինելուց դադարեցին: Վասն որոյ նորա անունը Բաբելոն կոցուեցավ, որովհետև Եհովան այնտեղ խառնակեց բոլոր երկրի լեզուն. եւ Եհովան նորանց ցրեց այն տեղից բոլոր երկրի երեսի վերայ»¹: «Աստվածաշունչը» ամենից շատ թարգմանված գիրքն է՝ 2233 լեզուներով, ու դեռ շարունակում է թարգմանվել: Առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Նոր կտակարանի հայերեն թարգմանությունը:

Հայ հին թարգմանական գրականության համար սովորաբար առանձնացվում են հինգ շրջանի թարգմանություններ՝ ա) դասական (V դար), բ) հունաբան դպրոցի (V դ. վերջ – VIII դ. սկիզբ), գ) կիլիկյան

¹ Տե՛ս Աստուածաշունչ, Ս. Էջմիածին, 1989, էջ 41:

շրջանի (XII–XIII դ), դ) միաբարակյան (ունիթորակյան) միջավայրի (XIV դ.), ե) ուշմիջնադարյան (XVII–XVIII դդ.)²:

Ինչպես տեսնում ենք, սույն դասակարգումից դուրս է մնացել VIII դ. սկզբից մինչև XI դարն ընդգրկող ժամանակահատվածը, որը և կարելի է բնորոշել որպես թարգմանական գրականության անկման շրջան³:

Մեկ այլ շրջանաբաժանմամբ առանձնացվում է հայկական «ուրթ թարգմանչաց դպրոց»։ 1) դասական (V դար), 2) հունաբան դպրոցի (V դ. վերջ – VIII դ. սկիզբ), 3) կիլիկյան շրջանի (XII – XIII դդ.), 4) միաբարակյան (ունիթորակյան) միջավայրի (XIV դ.)⁴, 5) ուշմիջնադարյան (XVII դ.– XVIII դ.), 6) մխիթարյանների (XVIII – XX դդ.), 7) Զմյուռնիայի և Թիֆլիսի թարգմանիչների (XX դ. 2–րդ կես), 8) ԵՊՀ–ի թարգմանիչների (XX դ. 70–ական թթ. առ այսօր)⁵:

XVIII դ. Մխիթարյան միաբանությունը ծավալեց թարգմանական վիթխարի գործունեություն։ Մխիթարյանները լույս ընծայեցին երկհատոր «Բառգիրք հայկազեան լեզուի» (1749–1769 թթ.), «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (1836–1837 թթ.) բառարանները, թարգմանեցին հին և դասական արժեքավոր գործեր՝ Ռասինի «Երգ վասն կրօնից», Լաֆոնտենի «Առակք» և այլն⁶:

XIX դ. արևելահայ թարգմանությունը ևս ծաղկեց թարգմանական հենքի վրա, երբ անհրաժեշտ էր միջնադարի հայ կյանքը բարձրացնել արևմտյան և ռուսական մտքի մակարդակի։ Այդ գործընթացը շարունակվեց մինչև մեր օրերը։

Սակայն անցած դարավերջի ֆրանսերենից հայերեն կատարված բազմաթիվ գեղարվեստական թարգմանությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ տարիների թարգմանական գործընթացը թեպետ նպատակասլաց էր, ծրագրված և բազմապլան, սակայն բարձրաճաշակ թարգմանությունների կողքին բազմաթիվ են նաև միջակությունները։ Օրինակ՝ այդ նույն Աստվածաշունչը, որ թարգմանվել է զանազան լեզուներից, տարբեր հրատարակիչների կողմից, միջին

² Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Հայ հին թարգմանական գրականություն, Ե., 1984:

³ Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 7:

⁴ Այս 4–րդ «դպրոցի» ժամանակն ավելի ընդգրկում է (XIV–XVIII դդ.), ծանոթ.՝ խմբագրի:

⁵ Ս. Մեֆերյան, Շեքսպիրը հայ իրականության մեջ, Ե., 2002, էջ 4:

⁶ Տե՛ս <http://hy.wikipedia.org/>

հայերեն, նաև մի լեզվով, որը ո՛չ արևմտահայերեն է, ո՛չ արևելահայերեն, այդչափ առատ թարգմանությունների մեջ դժվար է գտնել փոքրիշատե կատարյալ արևելահայերենով «Աստվածաշունչ», հատկապես՝ Հին կտակարան: Այստեղից էլ ծագեց և այժմ էլ հրատապ խնդիր է թարգմանության գնահատման օբյեկտիվ չափանիշների ներմուծումը և նրանց գործառության անհրաժեշտությունը:

XXI դ. նշանավորվեց առավել նոր տեխնոլոգիաների առաջացմամբ, լրատվության միջոցների աննախադեպ զարգացմամբ, որոնք հնարավորություն են ընձեռում շփվելու զանազան լեզուների հետ: Այսօր գրական, լրագրողական, այլև տեխնիկական թարգմանությունը կազմում են բանավոր թարգմանության էությունը: Ակնհայտ է գրավոր խոսքի թարգմանության և բանավոր թարգմանության տարբերությունը: Չնայած վերջինը կարող է համարվել թարգմանության ենթաբաժին՝ դիտարկվելով որպես նոր գործընթաց, գործնականում դրանք պահանջում են միանգամայն տարբեր ունակություններ: Տարբեր լեզուների միջավայրում թարգմանության հաջողությունը պայմանավորված է ոչ միայն դրանց իմացությամբ, այլև մշակութային գիտելիքների պաշարով: Բանավոր թարգմանությունն իրականացվում է հաջորդական և համընթաց եղանակներով, որոնք իրենց հերթին ունեն տարբերակներ:

Եվ այսօր գործում են բանավոր թարգմանության գնահատման հատուկ չափանիշներ: Ամեն տարի արձանագրվում են նաև բանավոր թարգմանության գնահատման չափանիշների արդյունքները ՅՈՒՆԵՍԿՕ L'Index Translationum կայքում⁷:

Ի վերջո, թարգմանության վերջնական նպատակն է արտահայտել լեզուների մեջ եղած ամենասերտ կապը. «Թարգմանությունը չի կարող երևան հանել, ստեղծել այդ կապը, սակայն այն կարող է ներկայացնել սաղմնային վիճակում կամ ավելի ուժգին: Եվ իր ստեղծագործության սաղմնային վիճակի՝ նշանակյալի այդ գործառությո՞ւնը ներկայացման ամբողջովին յուրահատուկ մի եղանակ է, որը չունի համարժեք լեզվական համակարգից դուրս: Քանի որ կյանքում գոյություն ունեցող բազում

⁷ «L'Index Translationum»-ը աշխարհում կատարվող թարգմանությունների ցուցակ-ցուցիչն է, որը պատասխանում է տարբեր չափանիշների՝ հեղինակ, հրատարակիչ, երկիր, լեզու և այլն: Այն ղեկավարում է Յյունեսկոն:

համանման կապերի, հարաբերությունների մեջ թարգմանությունն է ամենաարագը, որ գերազանցում է բոլորին: Թարգմանությունը ենթադրում է, որ լեզուների միջև գոյություն ունեցող կապը նախասկզբնական զուգամետություն է, որ լեզուները օտար չեն միմյանց, այլ ի սկզբանե ազգակից են՝ վերացարկված բոլոր տեսակի պատմական կապերով»⁸:

Մեր հետազոտությունները, այլև մանկավարժական փորձը ցույց են տալիս, որ թարգմանությունների գնահատման օբյեկտիվ չափանիշների մշակումը և աստիճանավորումը միանգամայն իրական է, այսինքն՝ եթե. ա) թարգմանիչ-փորձագետները զուգադրական քննությամբ որոշում են իմաստային շեղումները՝ բացահայտելով իմաստային համարժեք անճշտությունները, բ) բացահայտվում են շարահյուսական շեղումները, գ) համեմատվում են թարգմանությունը և բնօրինակի այլ թարգմանությունները (եթե այդպիսիք կան), դ) համեմատվում են տվյալ թարգմանությունը և այլ լեզուներով կատարված թարգմանությունները (եթե այդպիսիք կան), ե) հետադարձ թարգմանությամբ որոշվում է անճշտությունների և շեղումների չափը, զ) հեղինակի ոճի՝ թարգմանական ոճի համապատասխանության աստիճանը, է) աշխարհագրական և սոցիոգրական համապատասխանության աստիճանը, ը) որոշվում է թարգմանական ստեղծարարության և ազատության չափը:

Վերջապես կարևոր է գրողի և թարգմանչի իդիոլեկտի՝ անհատական խոսքի գնահատումը. ոճական որակը կարող է դառնալ անվերջանալի վիճաբանությունների առարկա (անգամ Մ. Պրուստը և Ջ. Ջոյսը մեծ դժվարություններով են տպագրվել):

Գեղարվեստական թարգմանության մեջ այս կամ այն մասի ճիշտ կամ սխալ լինելու մասին դատողությունը, այսինքն՝ սխալների առկայության կամ բացակայության բացահայտումը կատարվում է սուբյեկտիվ զգացողության հիման վրա և դրանից հետո միայն քննարկվում: Սակայն անհատականը հնարավոր է հաղթահարել, և դա ապացուցված է: Բայց ոչ թե սուբյեկտիվ չափանիշները օբյեկտիվ չափանիշներով փոխարինելով,

⁸ *Jeanne Dancette, Louise Audet et Laurence Jay-Rayon, Axes et créativité en traduction, Erudit, Montréal, 2007, p. 108-122.*

այլ օրյեկտիվ դարձնելով այն օրինաչափությունները, որոնք ընկած են սուբյեկտիվ դատողությունների հիմքում:

Թերևս հարկ է նշել, որ թարգմանության գնահատման չափանիշների գաղափարն առաջին անգամ հղացել են ռուս թարգմանաբանները՝ անցած դարի 70-ական թվականների⁹: Նրանց կարծիքով գոյություն ունի գեղարվեստական թարգմանության գնահատման չափանիշների երկու շարք, որոնցից առաջինը գործում է միայն լեզվաբանական հիմքի (թարգմանության համարժեքության), իսկ երկրորդը՝ գործաբանական գործառույթի հիմքի վրա:

Գիտական չափանիշների պարտադիր լինելն այնպիսի ասպարեզի համար, ինչպիսին գրական-գեղարվեստական թարգմանությունն է, երևում է Ա. Մեշոննիկի ուսումնասիրություններից, որոնցում բացահայտվում են այն խոչընդոտները, որոնք խանգարել են (և դեռ խանգարում են) գեղարվեստական թարգմանության անկախ տեսության հաստատմանը: Նրա առաջարկություններից է տարբերակում մտցնել *թարգմանություն-տեքստ* և *թարգմանություն-ոչ տեքստ* հասկացությունների միջև¹⁰:

Գրող, հրապարակախոս և հայտնի թարգմանիչ Կ. Սուրենյանը (թարգմ.՝ Դոստոևսկի, «Կարամազով Եղբայրներ», «Դները», Գոլտուորդի, «Ասք Ֆորսայթների մասին») ընդհանրապես չէր արտոնում իր գործերի թարգմանությունները՝ գտնելով, որ միայն հեղինակն ինքը կարող է ճշգրիտ փոխանցել իր սեփական ստեղծագործությունը: «Միայն որակյալ թարգմանությունն է, որ կարող է փոխարինել բնագրին: Հեղինակի և ընթերցողի միջև կարիք չկա միջնորդի, եթե ընթերցողը գիտի այն լեզուն, որով գրված է տվյալ երկը: [...] որպեսզի գրական երկը մատչելի դառնա տարբեր ազգերի ընթերցողներին և համաշխարհային հնչողություն ստանա, կարիք ունի միջնորդի: Եվ այդ միջնորդը թարգմանիչն է»¹¹:

Սակայն այդ նույն խստապահանջ թարգմանչի՝ Ա. դը Սենտ-Էքզյուպերիի թարգմանությունը զուգադրաբար համեմատելիս և գնահատելիս (ըստ մեր առաջարկած օրյեկտիվ չափանիշների)

⁹ Т. Цвиллинг, О критериях оценки перевода (Тетради переводчика, № 15, М., 1978).

¹⁰ H. Meschonnic, Propositions pour une poétique de la traduction (Langue et littérature, Paris, 1999, էջ 16):

¹¹ Տե՛ս Կ. Սուրենյան, Պսակ և հրաժեշտ թարգմանության «Գարուն», 1982, 1, էջ 4:

հայտնաբերվում են աղաղակող անճշտություններ հենց առաջին կետից սկսած՝ համարժեքության հարցում¹²:

Այսպես, իր երկերի գեղարվեստական թարգմանությանը կասկածով էր վերաբերվում ֆրանսիացի մեծ բանաստեղծ Ս.–Ժ. Պերսը, որ ամենքին չէր արտոնում իր գործերի թարգմանությունը: Նրա «Անաբասիս» պոեմի անգլերեն թարգմանությունը, որն իրականացնում էր Թ. Ս. Էլիոթը, տևեց վեց տարի, քանի որ հեղինակն ինքն էր հսկում թարգմանությունը՝ ճշտելով ամեն բառ և արտահայտություն: Ի վերջո, վերջնական տարբերակը լույս տեսավ միայն 1930 թթ.: Ս.–Ժ. Պերսը «Անդաստան» հանդեսում հայտնի թարգմանիչ Մ. Կարնեին տված իր հարցազրույցում ասում է. «Գրիգոր Նարեկացի՛ն... Գիտե՞ք որ formidable բանաստեղծ մըն էր ան: Հա՛, չմոռնամ շեշտելու, թե իմ հիացմունքս կերթայ նաև հայ նոր բանաստեղծներուն: Վարուժա՛նը, ինչ մեծ բանաստեղծ. անոր իրապաշտ կտորները, սիրո վերայ, գլուխ–գործոցներ են: [...] Լեզուներ կան, որ բանաստեղծական են, ուրիշներ հակաբանաստեղծական: Ու ինձի կը թուի թե՛ հայերենն ալ վերացական լեզու է, ուստի բանաստեղծական, այսինքն՝ բառ մը կրնայ թելադրել, բացի իր իմաստէն, նաև ուրիշ բաներ»¹³:

«Ի՞նչ է թարգմանությունը» հարցի տարբեր պատասխաններ կան, որոնք հաճախ հակասական են եղել: Եվ զարմանալի չէ, որ այդ բնագավառի ներկայիս ամենաերևելի տեսաբանները թարգմանիչներն են, և նրանց թարգմանաբանական ուսմունքները, օրինակ՝ Ա. Բերմանի, Յ. Նայդայի, Ա. Մեշոնիկի, Ու. Էկոյի, Դ. Սելեշկովիչի, Կ. Ռայսի և ուրիշների ուսումնասիրությունները հիմնված են իրենց իսկ գործունեության և փորձի վրա: Եթե Մեշոնիկի առաջարկած թարգմանության պոետիկան առնչվում է ընդհանրապես տեքստաբանության վերաբերյալ մտորումներին, ապա Նայդայի թարգմանության տեսությունն ավելի շուտ ներառում է ժամանակակից թարգմանաբանների իրատեսական մոտեցումները:

¹² Տե՛ս Մ. Հակոբյան, Անտուան դը Սենտ–Էքզյուպերիի «Փոքրիկ Իշխանը» վիպակի թարգմանության գնահատումը ըստ օբյեկտիվ չափանիշների («Ոսկե դիվան», պր. 4, Ե., 2012–2013, էջ 74):

¹³ «Զրույց Սեն–Ջոն Փերսի հետ» [«Անդաստան» (հանդես) (12), Մարսել, 1958, թ. 8–9]:

Մ. Յվետանան գրում է հետևյալը. «Այսօր ես ցանկություն ունեմ, որ Ռիլկեն խոսի իմ միջոցով: Խոսակցական լեզվում դա կոչվում է թարգմանել: Բայց թարգմանություն նշանակում է նաև այլ բան: Միայն անցում չենք կատարում մեկ լեզվից մեկ այլ լեզվին: Ես անցկացնում եմ Ռիլկեին ռուսերենի մեջ, այնպես, ինչպես նա մի օր ինձ կանցկացնի մեկ այլ աշխարհ»¹⁴:

ОБЪЕКТИВНЫЕ КРИТЕРИИ ОЦЕНКИ ИСКУССТВА ПЕРЕВОДА

Кандидат филолог. наук А. АКОПЯН

В статье рассматриваются исторические ступени армянской переводоведческой школы, достижения прошлого, а также беспрецедентное изобилие переводов в наше время и один важный вопрос современного переводоведения – оценка перевода. Мы предлагаем объективные критерии оценки перевода, необходимость которых бесспорно.

THE OBJECTIVE CRITERIA OF THE ART OF TRANSLATION

PhD A. HAKOBYAN

The article discusses the historical stages of the Armenian translation school, the achievements of the past, as well as the unprecedented abundance of translation in nowadays and one important problem that follows from the above mentioned – the evaluation of translation. We suggest the objective criteria of evaluation of translation the necessity of which is undisputable.

¹⁴ Տե՛ս Ռիլե, Pasternak, Tsvétaïva, *Correspondance à trois*, Gallimard, Paris, 1983, էջ 15–16:

Լ. Շ. Հովհաննիսյան, Հատուկ անունների մեկնությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, 48 էջ:

Աշխատությունն ունի առաջաբան և երկու գլուխ: Առաջին գլխում քննվում են իրանական լեզուների տվյալներով մեկնաբանվող հատուկ անուններ (էջ 7–25), իսկ երկրորդում՝ «այլ բնույթի հատուկ անուններ» (էջ 26–46): Ընդ որում՝ առաջինի դեպքում քննության են առնվում՝ 1) անձնանուններ և տոհմանուններ (էջ 7–16), 2) տեղանուններ (էջ 16–25):

Կարելի է զարմանալ, որ Մովսես Խորենացու «Պատմության» մեջ դեռևս մնում են հարցեր, որոնք կարոտ են նոր մեկնաբանումների («մեկնման»). այս գիրքը կարդալիս մտածում ես, որ կան: Դա ոչ թե նախկին ուսումնասիրողների, եթե կարելի է ասել, «թերացումն» է, այլ Խորենացու հանճարի բազմաշերտ և խորիմաստ լինելը, նրա բառերի և ձևակերպումների իմաստասիրական խոր հագեցվածությունը, իր ժողովրդի պատմության մեծությունը:

Եվ ըստ այդմ էլ Խորենացու մշտամնա երկի՝ «Հայոց պատմության» բառապաշարի շատ միավորներ՝ բառեր, անվանումներ, պարզվում է, դեռևս կարոտ են գիտական լուսաբանման: Տվյալ դեպքում տարբեր կարգի հատուկ անուններ գրախոսվող աշխատանքում վերստին քննարկվում են և ստանում իրենց նոր և բավականին համոզիչ լուծումները, ընդ որում՝ դա արվում է հայագիտության մեջ այդ հարցերի վերաբերյալ ձեռքբերումների նկատառումով, հայերենի ստուգաբանության սկզբունքների կիրառմամբ:

Այդպես, թվով ինը անձնանուն և տոհմանուն վերստին քննության են առնվում, այս անգամ՝ իրանական լեզուների տվյալների օգտագործմամբ, որը հանգում է հավաստի արդյունքի:

Նշենք նման վերլուծություններից մեկ-երկուսը՝ մյուսները թողնելով ընթերցողին (հետաքրքրվողին). *Ածղահալ* «վիշապ Դահալ» (< *աժ* [իրան. až «օձ». հմմտ. հայ. *իժ* «(մի տեսակ) օձ»]), *Բագարատ* (ըստ պատմիչի՝ «Բագրատունիք Բագարատ Բագադիա է»), ընդ որում՝ իրան. *d* > հայ. *p* անցմամբ (հմմտ. հայ. *ապարանք* < իրան. apādāna և այլն) (< bāg «աստված», data «տալ». «Բագարատ-Բագադիա նշանակում է «աստվածատուր»), *Խոսրով Կոտակ* (< միրան. kōtak «մանուկ, փոքր», հմմտ. պրս. kutāh «կարճ», *խոսրով* < իրան. hu «լավ» և srāv «խոսք», այսինքն՝ «լավ խոսող, ճարտարախոս»): Այս նույն ոգով և խոր վերլուծությամբ ներկայացվում են *Կամսար*, *Շապուհ Շաւասպ*, *Պերոզ*, *Վարաշ*, *Վարագ-Վարաժ*, *Վճեն(ք)* հատուկ անուն-անձնանունները, որոնց կրողներն, ի դեպ, հայոց պատմության անմահ անուններ են, ամենայն հիշողության և իրենց բուն իմաստի հանգույն (անվանադրման առումով) ճանաչելի:

Ինչպես արդեն նշեցինք, առանձին քննության են առնված հետևյալ տեղանունները՝ *Աշտիշատ* (< *յաշտ*– < միրան. yašt «զոհ». հմմտ. հայ. *յաշտ առնել* «զոհ մատուցել» և –*շատ* < միրան. šad «վայր, տեղ»), այսպես նաև՝ *Բահղ Առաւօտին*, *Դուին*, *Մարմէտ/Մարաց մարզ*, *Պատիժահար գաւառ/Գեղմանց լեռն*. բնագրագիտական քննության տեսանկյունից բավականին ուշագրավ է բերվածներից վերջինին անդրադառնալը, ըստ որի պարզվում է, որ ժամանակին բառագիտական լուրջ ճշգրտում է մտցրել Խորենացու բնագրի ուսումնասիրող Բ. Պատկանյանը:

Աշխատության այդ գլխում հեղինակն անդրադառնում է նաև «մի բառի, որը հատուկ անուն չէ». դա *դաստակերտ* (հոմանիշ՝ *ձեռակերտ*) բառն է, որի երկու բաղադրիչներն էլ իրանական են (< *դաստ*– [< իրան. dast «ձեռք»] և *կերտ*– «կերտել, գործ, շինություն» [< իրան. kar, kr «անել, պտրաստել»]):

Երկրորդ գլխում «այլ բնույթի հատուկ անուններից» առանձին ուշադրության առարկա են տարբեր ծագում ունեցող մի շարք հատուկ անուններ, որոնց նախկինում չեն անդրադարձել այն չափով, ինչ չափով նկատում ենք այս դեպքում: Օրինակ՝ *Աբգար* («կարծում ենք բառը ունի հ.–է. ծագում. հմմտ. իր. (a)vāk «բառ, խոսք», նաև «համբավ, հռչակ»), *Աղուանք* («աղու երկրի մարդիկ», «հաճելի՝ դուրեկան բնություն ունեցող

երկրի մարդիկ՝ բնակիչներ»։ հմմտ. հ.-ե. *al-bho-, *aləbhniā- > հայ. *աղաւնի* և այլն)։ Այսպէս նաև ստուգաբանվում և պարզաբանվում են հետևյալ հատուկ անունները՝ *Անգեղեայ/Անգեղ տուն, Անգեղեայ/Տորք, Արագած, Բարքորայ, Դիմաքսեան, Գնունի, Զեւսիպոն, Հեղիայ, Մեստրայիմ, Նիկանովր, Ոլիմպոս/Դիւցքնկէց, Տարաւն*։ Հեղինակը հանդես է բերում իրանագետ-հայագետի մեծ հմտություն խնդրո առարկա նյութի մանրամասն քննության հարցում։

Աշխատանքի վերջում կա ամփոփում, որ վերաբերում է Խորենացու, այսպէս կոչված, «ստուգաբանություններին», ոչ միայն հունարենին, այլև միջին պարսկերենին «քաջատեղյակ» լինելուն։

Վ. Գ. Համբարձումյան

Վ. Լ. Կատվայան, Հայ բարբառագիտության հարցեր, Երևան, «Հայաստան» հրատ., 2014, 232 էջ:

Զարգացման հարատև ուղի անցած հայ բարբառագիտությունը հարստանում է վերջերս հրապարակ իջած մի ինքնատիպ աշխատությամբ, որը հեղինակել է ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ.գ.թ. Վ. Կատվայանը: Գրքում ի մի են բերված տարբեր պարբերականներում, գիտաժողովներում արդեն իսկ հրապարակված բարբառագիտական հոդվածներ ու զեկուցումներ, ինչպես նաև առանձին լույս տեսած մեկ աշխատություն: Գրքի վերնագիրն ինքնին խոսում է՝ ակնհայտորեն ցույց տալով, որ մեր առջև է բարբառագիտական մի հետաքրքիր ուսումնասիրությունների ժողովածու՝ հասցեագրված հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներին տվյալ բնագավառի մասնագետներին, հայ բարբառներով հետաքրքրվողներին:

Աշխատությունն ամբողջությամբ և ընդգրկումով արժանի է լուրջ ուշադրության և պատշաճ գնահատանքի:

Հեղինակն, ինչ խոսք, բարբառագիտության ասպարեզում արդեն հայտնի անուն է: Նա շուրջ երկուսուկես տասնամյակ է, որ զբաղվում է ժամանակակից հայերենի և հայ բարբառների, ի մասնավորի՝ Բայազետի բարբառի լեզվապատմական, էթնամշակութային առանձնահատկություններով, և անձամբ այդ բարբառը կրողն է:

Գիրքն ունի բավականին կոռ և տրամաբանական կառուցվածք, ինչպես նաև հարուստ լեզվական և տեսական բարբառային նյութ:

Առաջին մասում ընդգրկված հոդվածներում քննվում են հայ բարբառագիտության համար արդիական մի շարք տեսական խնդիրներ՝ «Հայ բարբառների ուսումնասիրության մի քանի հարցերի շուրջ», «Բարբառի ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ», «Ընդհանուր հայերենյան լեզվական հատկանիշները բարբառներում» «Տարբերակայնությունը իբրև բարբառի

կարևոր հատկանիշ» վերնագրերով: Պետք է նկատել, որ վերոնշյալ հոդվածաշարում շահեկան լուծումներով պարզաբանվում են բարբառային ավելի լայն ոլորտներ ընդգրկող հարցեր, այն է՝ բարբառի տարբերակվածությունը՝ տարբերակայնությունը ներկայացնելով իբրև բարբառի կարևոր հատկանիշ, հայերենի բարբառների ուսումնասիրության մեթոդներն ու հայեցակետերը: Դիտարկելով բարբառը և նրա ըմբռնումը հայ լեզվաբանության մեջ՝ հեղինակը բարբառի բուն և էական հատկանիշը համարում է նրա՝ «լեզվի կենդանի, բնական և չնորմավորված լինելը», ապա եզրակացնում՝ «բարբառները ևս ունեն իրենց գործառույթը և լավ կամ վատ լինել չեն կարող: Ինչպես որ վայրի բնությունը պարտեզի համեմատությամբ ստորին դրսևորում չէ, այնպես էլ բարբառները լեզվի ստորին ձևեր չեն և արժանի չեն մերժողական, առավել ևս՝ քամահրական վերաբերմունքի»: Տեսական շարադրանքում բարբառագետն առաջ է քաշում այն օրինակելի տեսակետը, որ հայերենի բարբառները և տարածքային միավորներն ուսումնասիրելիս բարբառային հատկանիշները որոշելու և ներկայացնելու համար համեմատության եզր կարող են դառնալ հենց համահայերենյան լեզվական հատկանիշները կամ հանրույթները, որով, ըստ հեղինակի, ավելի որոշակի կլինի ներկայացնել գրական ու խոսակցական լեզուների, բարբառների յուրահատկությունները:

Գրքի երկրորդ մասում զետեղված են հոդվածներ ու զեկուցումներ, որոնք, ինչպես հեղինակն է բնութագրում, «վերաբերում են կա՛մ բարբառային հայերենին ընդհանրապես, կա՛մ էլ բարբառների որոշակի խմբի»: Գիտնականի լայնախոհ աշխարհայացքով, գիտական ճշգրիտ, համապատասխան օրինակների վկայակոչությամբ են ներկայացված հայ. *ա* ձայնավորի դրսևորումները Բայազետի բարբառում և «Աճառյանի օրենքը», «*Հ-ի* համապատասխանությունը հայերենի բարբառներում», «Հայերենի բարբառներում ցուցական դերանունների դրսևորման առանձնահատկությունների մասին», «Բայի սեռը Բայազետի բարբառում», «*Եմ* բայը Բայազետի բարբառում», «Խոսվածքային առանձնահատկություններ Բայազետի բարբառում» հոդվածատիպ ուսումնասիրությունները:

Հեղինակն իր ուսումնասիրություններում պարզաբանում է Բայազետի բարբառի խոսվածքային առանձնահատկությունները, լեզվական տարաբնույթ, յուրահատուկ իրողություններն ու հատկանիշները և դրանք համեմատում հարակից և մերձավոր բարբառների նույն համակարգերի հետ՝ հոդվածներից մեկում առաջարկելով բարբառագիտության մեջ «...տարբերակել և ներմուծել *խոսվածքային հատկանիշ* հասկացությունը»: Բարբառագետը նորույթը հիմնավորում է հետևյալ կերպ. «Եթե բարբառային հատկանիշները բնութագրվում են առկայություն/բացակայություն հակադրությամբ և ունեն համակարգային բնույթ ու բարբառները միմյանցից տարբերող դեր, ապա խոսվածքային հատկանիշները կբնութագրվեն բարբառային հատկանիշների դրսևորումների որակական և քանակական տատանումներով, մասնավոր բնույթով»:

Մեծ կարևորություն է ստանում հնչյունաբանական և որոշ ոչ այնքան հայտնի հնչյունական երևույթների քննությունը: Խոսքը Բայազետի բարբառում քմային և շրթնային *ա* ձայնավորների հնչույթային արժեքի, Աճառյանի օրենքի տարածման և նրա սահմանափակումների մասին վերլուծություններն են: Առանձնակի գիտական արժեք է ներկայացնում հայերենի բարբառներում *հ-խ* հնչյունների համապատասխանությանը նվիրված ուսումնասիրությունը, որում հեղինակը զարգացնում է այն մոտեցումը, որ այդ համապատասխանությունը գալիս է դեռևս հայերենի նախագրային շրջանից, նույնիսկ՝ «այն կարող է ուղղակի ժառանգություն լինել նախալեզվից»,– եզրակացնում է հեղինակը:

Հաջողված են նաև Վ. Կատվալյանի նկարագրական և տարածամասնակյա վերլուծությունները հայերենի բարբառներում ցուցական դերանունների դրսևորած այլազան, ձևաշատ առանձնահատկությունների, Բայազետի բարբառում բայասեռի արտահայտման բազմաձևության, պակասավոր *եւ* բայի ցուցաբերած դրսևորումների վերաբերյալ:

Առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում գրքի երրորդ մասում ընդգրկված և հարցերի լայն շրջանակով վերլուծության առնված «Մեսրոպյան *է*, *է* գրերի ուղղագրությունը և հնչյունական արժեքը» աշխատանքը: Հեղինակը հիմնավոր դիտարկումներով ներկայացնում է *է*, *է* գրերի ուղղագրական յուրահատկությունները դասական հայերենում,

նրանց հնչյունական արժեքը, դրսևորումները հնչյունական շղթայի տարբեր դիրքերում, արմատի շեշտակիք փակ վանկում: Աշխատության շահեկանությունը ի հայտ է գալիս ըստ այնմ, որ գրաբարյան *է*, *ե* գրերի հնչյունական համապատասխանությունները ներկայացվում են հայերենի բարբառներում այս կամ այն համապատասխանության հետ համեմատությամբ: Ըստ Վ. Կատվայանի վերլուծությունների՝ հինհայերենյան գրական հուշարձաններում վկայագրված է գիրը [ei] արտասանությամբ երկբարբառակերպ է թե՛ շեշտակիք վանկում, թե՛ ձայնավորից առաջ եղած դիրքում, իսկ *ե* գիրը երկարժույթ է [ie] կամ [eə] արտասանությամբ երկբարբառակերպ է շեշտակիք վանկում, իսկ անշեշտ վանկում՝ [e] պարզ ձայնավոր:

Քննելով *է*, *ե* գրերի արտացոլումը և պատմական հնչյունափոխությունը հայերենի բարբառներում՝ Վ. Կատվայանը եզրակացնում է, որ հին հայերենյան այդ հնչյունները հայերենի բարբառներում արտացոլվել են տարբեր կերպ և ունեցել են զարգացման տարբեր ընթացք: Հեղինակը հանգում է նրան, որ *է* երկբարբառակերպը մենաբարբառացման է ենթարկվել հայերենի բոլոր դրսևորումներում: *Ե* երկբարբառակերպը հայերենի բարբառների մեծ մասում հիմնականում միավանկ (որոշ դեպքերում՝ երկվանկ) բառերի սկզբում վերածվել է երկհնչյունի, իսկ բարբառներից մի քանիսում շեշտակիք վանկում պահել է երկբարբառային արտասանությունը, սակավաթիվ բարբառներում մենաբարբառացել է՝ վերածվելով [e] կամ [i] պարզ ձայնավորի, երբեմն էլ՝ հնչյունական այլ իրողության:

Հեղինակը, հիմնվելով հնչյունափոխական տարբեր իրողությունների և լեզվական հիմնավոր վկայությունների վրա, ներկայացնում է նաև *է*, *ե* երկբարբառակերպների պատմական հնչյունափոխության հարաբերական, իր իսկ խոսքերով «մոտավորապես որոշելու» ժամանակը թե՛ գրաբարում, թե՛ բարբառներում, որն, ինչպես հեղինակն է գրում, ունեցել է փոփոխման երեք ընթացք. ա) 5-րդ դ. 2-րդ կեսից սկիզբ է առել *է* երկբարբառակերպի մենաբարբառացումը՝ ընդգրկելով հայերենի բոլոր դրսևորումները, բ) 11-րդ դ. սկիզբ է առել միավանկ և որոշ երկվանկ բառերի սկզբում *ե* երկբարբառակերպի վերածումը երկհնչյունի՝ ընդգրկելով հայերենի դրսևորումների մեծ մասը, գ) 11-րդ դ.

սկիզբ է առել նաև հ երկբարբառակերպի մենաբարբառացումը բարբառների մեծ մասում, իսկ մի քանիսում այն տեղի չի ունեցել:

Վ. Կատվալյանի «Հայ բարբառագիտության հարցեր» գիրքը կարևոր ձեռքբերում է հայոց լեզվի ընդհանուր պատմության և ժամանակակից վիճակի ուսումնասիրության բնագավառում:

*Գ. Գ. Մկրտչյան
Բանասիր. գիտ. թեկնածու*

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ. BOOK REVIEWS

Vazguen G. Hambardzumyan, Armenian and Indo-European: Essays on Comparative Lexicology of the Armenian Language (Comparative-typological Variativity), Yerevan, NAS RA Publ., 2010, 184 p.:

Գիրքը լույս է տեսել անգլերեն՝ գիտական ավելի լայն շրջանին ներկայացնելու հայերենի բառագիտական-ստուգաբանական այն նոր հարցադրումները, որոնք առաջ են քաշվել իր իսկ հեղինակի կողմից՝ իբրև հայերենի տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրության մի օրինակ:

Աշխատանքի առաջին բաժինը վերաբերում է համեմատական քննության մեջ լեզվական միավորների տարբերակային վերականգնման խնդրին: Երկրորդ բաժնում տրվում են մեկ տասնյակից ավելի բառերի նոր ստուգաբանություններ, կատարվում են ստուգաբանական ճշգրտումներ և լրացումներ. *աղջիկ* < հե. *al-, *աղտամուղտ* < հե. *alghi-, *աշան* < հե. *(e)s-en, *արտախոյր* < հե. *ar-(t^[h]o-), *աստուած* < հե. *Has-t'ieŋ-os, *գ'ալգ'ալ(ի)* (բրբռ.) < հե. *k^[h]oel-, *ըմպեմ* < հե. *p^[h]oH(i)-, *կամն* < հե. *ak^[h]men, *սայլ* < հե. *k^[h]oel-, (բրբռ.) *սոնել* (բրբռ.) < հե. *k'oer-, *տից* < հե. *di-t-, *թանձր* < հե. *t'ns-u-, *խաւարծի* < հե. *treg'-, *խաւարտ* < հե. *treg'-: Երրորդ բաժնում հեղինակն անդրադառնում է հայերենի և հինանատոլիական (խեթալուվական) լեզուների միջև հնարավոր նոր գուգադիպումներին:

Քննարկվող հարցերը (կամ դրանց բաղադրիչները) տվյալ դեպքում ստացել են ավելի ամբողջական և տեսական հիմքերով ավելի հիմնավոր լուծում: Գիրքն ունի համապատասխան գիտական ապարատ (տարբեր լեզուներով տեսական նոր գրականության, հնդեվրոպական արմատների,

հայերեն և այլ լեզուների համապատասխան բառերի կամ արմատների, ինչպես նաև հեղինակների ցանկեր):

Ս. Մ. Գրիգորյան, Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 75 էջ:

Հին գրական հայերենն ունի հարուստ բառապաշար, սակայն դրա մի մասը, թեկուզև մեծ մասը, որ ի մի է բերված գրաբարի հին և նոր «Հայկազյան» բառարաններում, պարզվում է, դեռևս ունի համալրման կարիք: Լրացումով առաջինը հանդես եկան Մխիթարյան հայրերը, որ «Նոր հայկազյանից» մեկ տասնամյակ չանցած լույս ընծայեցին «Առձեռն» բառարանը՝ մեծ թիվ կազմող համալրումով:

Հետագայում ևս գրական հուշարձանների բառապաշարին նվիրված աշխատանքներում առանձնացվեցին «Հայկազյանից» դուրս մնացած (հիմնականում գրական աղբյուրները ձեռքի տակ չունենալու պատճառով) բառեր, գրվեցին նմանատիպ առանձին աշխատանքներ:

Սույն աշխատության մեջ, իբրև նորակազմ բառ, ներկայացվում է Տաթևացու երկի բառապաշարի շուրջ երեք հարյուր միավոր, որը գալիս է համալրելու գրաբարի ընդհանուր բառապաշարը: Գիրքն ունի ներածական մաս և երկու բաժին: Առաջին մասում ընդգրկված են այն բառերը, որոնք այլ բառարանների մեջ «նախկինում վկայված են», իսկ երկրորդում՝ «բառարաններից դուրս մնացածներ»-ը: Ստույգ հաշվումներով՝ առաջինը պարունակում է 185 բառ, իսկ երկրորդը՝ 265: Սա բավականին մեծ պաշար է մի հեղինակի լեզվի նորաբանությունների առումով, որպիսով հող է պատրաստվում լրացնելու և համալրելու գրաբարի բառապաշարը:

Այս իմաստով գրքի հեղինակի արածը միանգամայն դրվատելի է, իսկ աշխատանքն՝ ըստ ամենայնի գնահատելի: Յուրաքանչյուր նորակազմ բառ այստեղ ներկայացվում է բառարանագրական սկզբունքով, այն բացատրական բառարան է, բառարանային տեղադրումը ավարտվում է բնագրային օրինակի մեջբերմամբ: Ցանկալի էր բառահոդվածները տեսնել ավելի հստակ և միասնական ձևակերպումով, խուսափել

կրկնություններից (օրինակ՝ երկրորդ մասի յուրաքանչյուր բառահոդվածի բացատրություն ավարտվում է «որևէ բառարան չի վկայում» նշումով, որը պարզապես բառարանագրական ավելորդություն է):

Գիրքն ունի համառոտագրությունների և գրականության ցանկեր: Այն լինելու է օգտագործելի և համեմատության կարևոր աղբյուր հին գրական հայերենի բառապաշարի համար:

Л. Г. Брутян, Беседы о культурной коммуникации (Учебник для студентов, обучающихся по специальности «Лингвистика и межкультурная коммуникация»), Е., Изд-во «Эдит Принт», 2014, 400 с.

Աշխատանքը գրված է տեսական լայն գիտելիքների և կիրառական (գործնական) հարուստ հիմքի վրա: Այս ստվար հատորը երկուսուկես տասնյակից ավելի վերնագրերով հարցերի մի ուշագրավ վերլուծություն է: Լեզու, մշակույթ և միջմշակութային հաղորդակցում թեմային (սա գրքի ամենաբազմապլան մասն է) հաջորդում են կարգաբանական մի շարք հասկացությունների, միջմշակութային հաղորդակցման տարբեր բաղադրիչների (դիմելաձևի տարբերություն, մարդաբանական, սոցիալական և կենսաբանական-մարմնակազմական ոլորտների, թվի, պահվածքի քաղաքավարության, սեռի, ընկալման և դաստիարակության, տեքստի և նրա թարգմանության համարժեքության և այլն) վերլուծություն, կամ ինչպես հեղինակն է անվանում՝ զրույցներ:

Իբրև դասագիրք՝ այն նախատեսված է «լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցում» մասնագիտացման համար, յուրաքանչյուր թեմային կից տրվում են ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ: Վերջում կա համապատասխան գրականության ցանկ:

Գիրքը նախատեսված է ոչ միայն ուսանողների, այլև միջմշակութային հաղորդակցման խնդիրներով հետաքրքրվողների համար:

«Ջահուկյանական ընթերցումներ» (Միջազգային գիտաժողովի զեկուցումներ. Ե., 2014 թ., հունիսի 11-12), Ե., «Ասողիկ» հրատ., 2014, 264 էջ:

Սա անվանի լեզվաբանի անունը կրող հերթական՝ 9-րդ ժողովածուն է, որն ի տարբերություն իր նախորդների ունի լրացուցիչ տեղեկացում, այն ունի միջազգային ընդգրկում:

Զեկուցումով հանդես են եկել մասնակիցներ Եգիպտոսից (Պ. Թերզյան, «Արևմտահայերենը եգիպտահայ վարժարաններու մեջ»), Շվեդիայից (Ա. Խաչատրյան, «Շվեդերենի արտասանական դժվարությունները հայերենի համեմատությամբ»), Իրանի Իսլամական Հանրապետությունից (Ս. Մալեք Մոհամմադի, «Միջին հայերենի իրանական բառաշերտի մասին»), Կանադայից (Դ. Սաքայան, «Խնդրառության մի քանի հարցեր»):

Լայն մասնակցություն են ունեցել Հայաստանի գիտական հաստատությունների լեզվաբաններ (ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևանի պետական համալսարան, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Վանաձորի պետական մանկավարժական համալսարան, Գորիսի պետական համալսարան, «Տաթև գիտակրթական համալիր» և այլն):

Գիտաժողովի երեք նիստերում կարդացված զեկուցումները և հաղորդումները տարբեր են թեմատիկայով, քննարկվեցին տարբեր ընդգրկման հարցեր հայոց լեզվի նախագրային և գրավոր ժամանակաշրջանի պատմության, բարբառագիտության, գրական հայերենի երկու տարբերակների, տերմինաբանության, ազգագրական նյութերի, հայ քրիստոնեական եկեղեցու տարբեր ծեսերի և ըմբռնումների գրական և բարբառային անվանումների վերաբերյալ:

Զեկուցումները լույս են տեսնում հոդվածների տեսքով, որոնք հազեցած են փաստական հարուստ նյութով, գիտական վերլուծությունները գրեթե անխտիր համոզիչ են: Որոշ հարցեր ստացել են նոր լուծումներ, և ըստ այդմ նոր լույս են սփռում հայերենի արդիական խնդիրների վրա: Հատկանշական է նաև այն, որ վաստակաշատ լեզվաբանների կողքին իրենց խրախուսելի քայլերն են անում

երիտասարդ մասնագետները, որոնց զեկուցումները մեծ մասամբ գնահատելի են նյութի բավարար իմացության և գիտական ճիշտ վերլուծության առումներով:

Ժողովածուն ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատանքի մի նոր ձեռքբերում է հայերենի ըստ ամենայնի հետազոտության բնագավառում:

«Հայ բարբառագիտության հիմնասխեմներ» (Միջազգային գիտաժողով. 8-9 հոկտեմբերի, 2014 թ., Ջեկուցումների ժողովածու), Ե., «Ասողիկ» հրատ., 2014, 224 էջ:

Հայ բարբառների ուսումնասիրությունը, հավանաբար, մտել է նոր փուլ: Հայտնի է, որ Գ. Ջահուկյանի բարբառագիտական տեսությանը հաջորդեցին բարբառների բառապաշարի իմաստային (թեմատիկ) խմբերի վերաբերյալ առանձին աշխատանքներ, իսկ հնչյունաբանության հարցերն, օրինակ, ընդունվեցին անքննադատ ձևով, դրվեցին նման աշխատանքների հիմքում: Անկախ նրանից, թե աճառյանական դպրոցից դուրս հայ բարբառների հնչյունական համակարգի հնության վերաբերյալ ինչպիսի այլ մոտեցումներ գոյություն ունեն, և ըստ այդմ ինչպիսի աշխատանքների կարելի է ձեռնամուխ լինել, ներկայումս բարբառներն ուսումնասիրվում են Աճառյանի և Ջահուկյանի կողմից մշակված տեսական հիմունքներով, որը խնդրի մի մասն է, և մի տեսակ շրջանցվում է մյուս, թերևս ոչ պակաս կարևոր մասը:

Գիտաժողովի զեկուցումներից և հաղորդումներից 16-ը եղել է ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտից, 5-ը՝ մեր հանրապետության գիտական և ուսումնական այլ հաստատություններից, իսկ 2-ը՝ արտերկրից:

Զգալի թիվ են կազմում առանձին բարբառներին վերաբերող հարցերի քննարկումները:

ա) Երեք զեկուցում նվիրված էր Արցախի (Ղարաբաղի) բարբառում միջին իրանական լեզուներից կատարված փոխառություններին (Լ. Հովհաննիսյան), *բնակարան* հասկացության բարբառային անվանումների պատմական զարգացմանը (Լ. Մարգարյան) և Արցախի

տարածքի բարբառային միավորների քմային բաղաձայններին (Ժ. Միքայելյան):

ա) Եղան մյուս բարբառների տարբեր իրողություններին նվիրված գեկուցումներ: Դրանք վերաբերում էին Բայազետի բարբառում նկատելի միջին հայերենին հատուկ իրողություններին (Վ. Կատվալյան), Մուշի բարբառով գրառված հեքիաթների անձնանուններին (Ա. Սանթրոյան, Լ. Պետրոսյան), Հ. Օրբելու կատարած Մոկսի բարբառի հավաքչական աշխատանքին (Ժ. Միքայելյան), Անտիոքի բարբառախմբում նկատվող արաբական փոխառություններին (Ս. Միքայելյան) և պարսկահայ տարածքի խոսվածքներում զգայարանների անվանումներով բաղադրված դարձվածային միավորներին (Լ. Տեր-Գրիգորյան, Ա. Մկրտումյան):

ա) Առանձին խումբ են կազմում ժամանակային, թեմատիկ և այլ կարգի տարբերություններով պայմանավորված գեկուցումները՝ նվիրված հայերենի բարբառների և ուրարտերենի բառային համընկումներին (Մ. Աղաբեկյան), 17-րդ դ. բժշկարաններում անկատար դերբայի բարբառային ձևերին (Հ. Թադևոսյան), 18-րդ դ. հոմանիշների՝ ձեռագիր բառարաններում նեղ բարբառային բառերի և իմաստների գործածությանը (Ն. Հովհաննիսյան), տոնական օրերի բարբառային անվանումներին (Հ. Մեսրոպյան), Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբում գործածվող դերանուններին (Ջ. Բառնասյան), հայերենի բարբառներում կալսած կալը հավաքելու գործիքների անվանումներին (Ա. Աբրահամյան), Գեղարքունիքի տարածաշրջանում ազգակցական հարաբերություն նշանկող բարբառային անվանումներին (Հ. Խաչատրյան), «խաղք» և «խայտառակ» հասկացությունների բարբառային ըմբռնումներին (Ս. Պապիկյան) և «Սասնա ծռեր»-ում *սագ* երաժշտական տերմինի գործածությանը (Գ. Մխիթարյան):

Գիտաժողովին մասնակցեցին արտասահմանցի հայագետներ: Հ. Գասպարեան-Փանոսեանի (Ֆրանսիա) գեկուցման թեման էր «Պոլսոյ բարբառէն դէպի արեւմտահայ գրաւոր կարգաւորուած լեզուն», իսկ Մ. Մալք Մոհամմադը (Իրանի Իսլամական Հանրապետություն) հանդես եկավ «Շահնամէի՝ Նոր Բայազետի բարբառով տարբերակի լեզվական և ոճական առանձնահատկությունները» թեմայով:

Գիտական նստաշրջանը եղավ հաջողված միջոցառում հայերենի բարբառների ստատիկ նկարագրության առումով: Վերջում զեկուցումների շուրջ ծավալված մտքերի փոխանակումը ևս ցույց տվեց, որ կան դեռևս որոշակի անելիքներ հայերենի տարածքային տարբերակների հետագա ուսումնասիրության համար:

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ. НАШИ ЮБИЛЕИ. JUBILEES

Լավրենտի Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը

2014 թ. փետրվարի 12-ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ գիտխորհրդի ընդլայնված նիստ՝ նվիրված ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Շահենի Հովհաննիսյանի 70-ամյակին:

Ունենալով գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ և ուսումնասիրությունների բազմակողմանի ընդգրկում՝ Լ. Շ. Հովհաննիսյանն անդրադարձել է հայագիտության մի շարք կարևոր խնդիրների: Նրա գրչին են պատկանում ավելի քան հարյուր գիտական աշխատություններ՝ ութսունից ավելի գիտական հոդվածներ, երկու տասնյակի հասնող մենագրական հետազոտություններ: Դրանք վերաբերում են գրաբարի ժամանակային ձևերի կիրառության առանձնահատկություններին, գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչություններին, հայերենի իրանական փոխառությունների տարբերակմանը և գործառական բաշխվածությանը, գրաբարի բառապաշարի իմաստային (թեմատիկ) խմբերի առանձնացմանն ու մեկնաբանությանը, ոչ պակաս կարևորություն ունեն բառաքննական դիտարկումները և ստուգաբանական նկատառումները, գրաբարի բառարանագրության և բառագիտության հարցերին վերաբերող աշխատանքները:

Հայերենի պատմության, մասնավորապես հին հայերենի բառապաշարի ուսումնասիրության բնագավառում առանձնակի ներդրում են «Հայերենի իրանական փոխառությունները» (Ե., 1990), «Գրաբարի բառապաշարը (V դար)» (Ե., 2006), «Հայ-իրանական նոր ստուգաբանություններ» (Ե., 2005), «Հայ թարգմանական գրականության բառապաշարը (V դար)» (Ե., 2007), «Գրաբարի բառարանագրության և բառագիտության հարցեր» (Ե., 2009), «Գրաբարի բառարան. Նոր

հայկազյան բառարանում չվկայված բառեր» (Ե., 2010), «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» (I մաս, Ե., 2008, II մաս, Ե., 2012) աշխատությունները:

Անցյալ տարի լույս տեսավ պրոֆ. Լ. Շ. Հովհաննիսյանի « Հատուկ անունների մեկնությունները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ» ծավալով ոչ մեծ, սակայն հարցադրումների և քննության առումով միանգամայն ուշագրավ աշխատությունը, որում հեղինակը տալիս է հայերեն բնիկ և փոխառյալ մի շարք բառերի ստուգաբանություններ և մեկնություններ:

Պրոֆ. Լ. Շ. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ 2006 թ. ինստիտուտում գումարվեց «Ջահուկյանական ընթերցումներ» վերտառությամբ հանրապետական անդրանիկ գիտական նստաշրջանը, որը դարձավ ամենամյա գիտական միջոցառում: Լ. Շ. Հովհաննիսյանը հայոց լեզվի պատմության հմուտ հետազոտող է, գիտական գրեթե յուրաքանչյուր հարցի քննարկման անմիջական մասնակիցներից մեկը: Հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում կարդացած նրա զեկուցումները մեծ հետաքրքրություն են առաջ բերել գիտության տարբեր բնագավառներում:

Գիտական վաստակի արժանի գնահատականն է նրան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրելը, ԳԱԱ Վաստակագրի արժանանալը, Մ. Խորենացու և Սփյուռքի նախարարության Մայրենիի դեսպան մեղալներով պարգևատրելը:

Մեծ է նաև պրոֆ. Լ. Շ. Հովհաննիսյանի ներդրումը գիտական կադրեր պատրաստելու գործում: Որպես լեզվի ինստիտուտի՝ ատենախոսության պաշտպանության մասնագիտական խորհրդի նախագահ՝ նա նպաստում է ոչ միայն հայ, այլև օտարազգի հայցորդների գիտական աստիճանաշնորհման գնահատելի գործին:

Շնորհավորում ենք վաստակաշատ հայագետին 70-ամյա հոբելյանի կապակցությամբ, մաղթում արևշատություն, նորանոր հաջողություններ աճնական կյանքում և գիտության մեջ:

Ռոբերտ Ուռուտյանի ծննդյան 80–ամյակը

ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստում բավականին ջերմ մթնոլորտում նշվեց ինստիտուտի երկարամյա աշխատակից, տեխնիկական գիտությունների թեկնածու Ռոբերտ Լիպարիտի Ուռուտյանի ծննդյան 80–ամյակը։ Նրա գիտական, ավելի մասնավոր՝ գիտատեխնիկական գործունեությունը սերտորեն առնչվում է հաշվողական (մաթեմատիկական), կիրառական, իսկ վերջին տասնամյակներին նաև համակարգչային լեզվաբանության առանցքային հարցերին։ Ռ. Լ. Ուռուտյանը մեզանում այն առաջին գիտնականներից է, որոնք տեղական ջանքեր և աշխատասիրություն են հանդես բերել հայերենի բառային միավորների, բայական կապակցությունների կադապարային, այլև ձևային նկարագրության հարցերում։

Այս բնագավառում նա հեղինակ է «Կիրառական և լեզվաբանությունը (Ե., 1978), «Ժամանակակից հայերենի բայական բառակապակցությունների ձևային նկարագրությունը» (Ե., 1984) մենագրությունների, հեղինակակից նույն բնույթի զգալի թվով համատեղ աշխատությունների, ինչպես նա բազմաթիվ գիտական հոդվածների և առաջարկությունների։

Ելույթ ունեցողները նշեցին, որ այս հոբելյանը հայրենիքին և ժողովրդին անմնացորդ նվիրված գիտնականի, սրտացավ ընկերոջ, ընտանիքի հոգատար հոր իմաստալից կյանքն է խորհրդանշում։ Ռ. Ուռուտյանը ինստիտուտի նվիրյալներից է, տարիներ շարունակ սիրով և մեծ պատասխանատվության զգացումով է կատարում գիտության մշակի դժվարին, բայց նաև սիրելի գործը։ Գիտական հետազոտության բոլոր ոլորտներում՝ «ԳՈՀԱՐ» (M3) լամպային հաշվողական մեքենայի

արագագործությունը խթանելուն առնչվող աշխատանքներ, «Գառնի» թարգմանական մեքենայի գլխավոր կոնստրուկտոր, տեղեկատվական հաշվողական համակարգերի լաբորատորիայի վարիչ, ապա ինստիտուտի Բարբառագիտության բաժնում ատլասի համար հավաքված առկա Բարբառային նյութը ծրագրավորելու և թվայնացնելու աշխատանքների ղեկավար, Ռ. Լ. Ուռուտյանը շարունակում է աշխատել գիտությանը նոր բան հավելելու գիտակցությամբ և պատասխանատվությամբ:

Լինելով տեխնիկական գիտությունների թեկնածու՝ երկար տարիներ զբաղվել է հայոց լեզվի ձևային նկարագրության խնդիրներով՝ նպաստելով մեքենական թարգմանության աշխատանքներին: Ինստիտուտը, այսօր նորովի արժևորելով և գնահատելով վաստակած մտավորականի գիտական ուղին և ձեռքբերումները, մաղթում է ուժ, եռանդ և կորով, երկար տարիների ստեղծագործական աշխատանք:

- ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի (ս.թ. մարտի 19) հյուրն էր Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամմադ Ռեիսին: Մեծարգո դեսպանը պատվոգրեր հանձնեց լեզվի ինստիտուտին և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, առաջատար գիտաշխատակից Լ. Շ. Հովհաննիսյանին՝ իրանագիտության բնագավառում կատարած նշանակալի աշխատանքների համար:

Ողջունելով հյուրին՝ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Լ. Կատվալյանը բարձր գնահատեց հայ-իրանական ջերմ և բարիդրացիական հարաբերությունները, համոզմունք հայտնեց, որ երկու ժողովուրդների միջև գիտամշակութային համագործակցություն ծավալելու և զարգացնելու մեծ հնարավորություններ կան, տեղեկացրեց, որ լեզվի ինստիտուտում մշակվում են հայ-իրանական լեզվական առնչություններին վերաբերող նոր ծրագրեր:

Դեսպանը մեծապես կարևորեց երկու բարեկամ ժողովուրդների հարաբերությունների հետագա զարգացումը, ինչպես նաև հասարակական գիտությունների բնագավառում համագործակցության անհրաժեշտությունը և իր պատրաստակամությունը հայտնեց՝ աջակցելու նման ծրագրերի իրագործմանը: Մոհամմադ Ռեիսին սիրով պատասխանեց ինստիտուտի գիտաշխատողներին հետաքրքրող հարցերին և մաղթեց գիտական նորանոր ձեռքբերումներ:

- Մայիսի 16-ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակիցները հյուրընկալվեցին Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում: Հյուրերին ողջունեց Մայր Աթոռի կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գևորգ վարդապետ Սարոյանը: Նա կարևորեց գիտական հաստատության և ճեմարանի միջև կապերի

ստեղծումն ու ամրապնդումը, համագործակցության ծավալումը: Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը ներկայացրեց ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները, անդրադարձավ ճեմարանի հետ համագործակցության հեռանկարներին:

Գիտաշխատողները ունկնդրեցին ճեմարանի երգչախմբի մի շարք բարձրակարգ կատարումներ, իրենց երգարվեստը ճեմարանականներին ներկայացրին բանասիրական գիտությունների թեկնածուներ Ջ. Բառնասյանը, Վ. Խաչատրյանը, Ժ. Միքայելյանը, Հ. Թադևոսյանը:

Լեզվի ինստիտուտը ճեմարանի գրադարանին նվիրեց 5 տասնյակից ավելի լեզվաբանական գրականություն:

- Մայիսի 27-ին Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում ինստիտուտի շուրջ քսան երիտասարդ գիտաշխատողների մասնակցությամբ: Հանդիպման նպատակն էր երիտասարդ գիտաշխատողներին հետաքրքրող հարցերի արծարծումը, դրանց լուծման ուղիների մշակումը:

Երիտասարդ լեզվաբանները խոսեցին իրենց հետազոտական աշխատանքների, առաջիկա գիտաժողովներում զեկուցումներով հանդես գալու ծրագրերի մասին: Անդրադարձան նաև այլ խնդիրների: Կրտսեր գիտաշխատողներ Տ. Սիրունյանը և Գ. Մկրտչյանը կարևորեցին այն հարցը, որ ինստիտուտի բոլոր աշխատասենյակներում պետք է հասանելի լինի համացանցը, առաջարկվեց նաև ստեղծել հնարավորություն՝ թվայնացնելու ինստիտուտի գիտաշխատողների համար հասանելի տեղական ու միջազգային թվայնացված գրադարանային ֆոնդերն ու աղբյուրները:

Մասնավորապես նշվեց, որ օրակարգային խնդիր է դարձել արդի լեզվաբանական ուղղությունների ներառումը ինստիտուտի գիտական աշխատանքներում, և երիտասարդներին առաջարկվեց քննարկել և ներկայացնել իրենց նկատառումները այդ հարցի վերաբերյալ: «Մեր ուսումնասիրությունները չպետք է ծավալվեն միայն լեզվաբանական ավանդական ուղղություններով, հարկավոր է լեզվաբանական նոր ուղղություններ զարգացնել, կիրառել հետազոտության նոր մեթոդներ», – ասաց Վ. Լ. Կատվալյանը:

Ինստիտուտի տնօրենը երիտասարդ գիտնականներին կոչ արեց գիտական աշխատանքում հանդես բերելու նվիրում, մասնագիտական լավագույն որակներ և պատասխանատվության բարձր զգացում:

- 2014 թ. մայիսի 29–ին Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հյուրընկալվեցին անվանի հայագետ–գերմանագետ, Կանադայի ՄակԳիլ համալսարանի պրոֆ. Դ. Գ. Սաքայանը, եզիպտահայ ճանաչված մտավորական, հասարակական գործիչ Պ. Թերզյանը:

Դ. Գ. Սաքայանը հայտնի է իր գիտական աշխատություններով, հատկապես՝ օտարախոսների համար գրված արևմտահայերենի և արևելահայերենի ինքնուսույցներով, ինչպես նաև ակադ. Գ. Բ. Ջահուկյանի «Универсальная теория языка» գրքի անգլերեն թարգմանությամբ:

Պ. Թերզյանը ՀԲԸՄ Եզիպտոսի շրջանային հանձնաժողովի ատենապետն է, ՀԲԸՄ–ի արաբատառ «Արեգ» ամսօրյայի հայկական նյութերի խորհրդատուն: Հեղինակ է մենագրությունների և բազմաթիվ հոդվածների, որոնցում անդրադարձել է հայությանը հուզող տարաբնույթ հարցերի: Հայապահպանությանը միտված նրա արգասաբեր գործունեությունը բարձր է գնահատվել Հայաստանի Հանրապետության գիտական հանրության և իշխանությունների կողմից:

Արևմտահայերենի բաժնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ե. Սարգսյանը հյուրերին ներկայացրեց իրենց բաժնում կատարվող աշխատանքների հիմնական ուղղությունները և ծրագրերը: Հյուրերն իրենց գոհունակությունը հայտնեցին բաժնի գործունեության վերաբերյալ և նշեցին, որ պատրաստակամ են լեզվի ինստիտուտին աջակցել արևմտահայերենի պահպանմանը, ուսումնասիրությանը և զարգացմանը միտված ձեռնարկներում:

Դ. Գ. Սաքայանը և Պ. Թերզյանը զեկուցումներով հանդես են գալու «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովում:

- Հունիսի 12–ին և 13–ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային հայերենագիտական գիտաժողովը: Այս անգամ այն

միջազգային էր: Այդ խորագրով ամենամյա գիտաժողովներ, ինչպես հայտնի է, լեզվի ինստիտուտում կազմակերպվում են 2006 թ. սկսած:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանն իր բացման խոսքում նշեց, որ անցած տարիների ընթացքում գիտական հանրության ուշադրությանն են ներկայացվել լեզվի ուսումնասիրության տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ աշխատանքներ՝ ժողովածուներ, մենագրություններ, բառարաններ, առանձին հոդվածներ, զեկուցումների դրույթներ և այլն, եղել են բավականին արդյունավետ քննարկումներ և բանավեճեր, որոնք էականորեն նպաստել են լեզվաբանական մտքի զարգացմանը:

Այս անգամ գիտաժողովին մասնակցության հայտ են ներկայացրել շուրջ հինգ տասնյակ գիտնականներ ինը երկրներից (Հայաստան, ԱՄՆ, Կանադա, Ավստրիա, Շվեդիա, Իրան, Եգիպտոս, Սիրիա, Լիբանան): Զեկուցումներում արծարծվեցին հայոց լեզվի զարգացմանը, կառուցվածքին և գործառույթներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Նստաշրջանին գործուն մասնակցություն ունեցան, նաև լեզվաբանական զանազան խնդիրների շուրջ զեկուցումներով հանդես եկան լեզվի ինստիտուտի, ինչպես նաև մեր հանրապետության տարբեր բուհերի (ԵՊՀ, ՀՊՄՀ, ՎՄԻ) գիտնականներ:

Երկօրյա գիտաժողովում լսվեցին չորս տասնյակից ավելի զեկուցումներ, որոնցում արծարծվեցին լեզվաբանական ամենատարբեր հարցեր, հայերենագիտության արդիական մի շարք խնդիրներ:

Կարդացվեցին զեկուցումներ հայերենի ընդհանուր և համեմատական ուսումնասիրության, համակարգչային լեզվաբանության, հայոց լեզվի պատմության և քերականական կառուցվածքի, գրական հայերենի երկու տարբերակների միասնականացման, հայ բարբառագիտության և բառարանագրության տարբեր խնդիրների վերաբերյալ:

Բայի խնդրառության որոշ հարցերի անդրադարձավ Կանադայի ՄակԳիլ համալսարանի պրոֆ., արևմտահայերենի ճանաչված մասնագետ-գերմանագետ Դ. Գ. Սաքայանը: Աստվածաշնչի հայերեն թարգմանության որոշ հատվածների շուրջ հետաքրքիր դիտարկումներ կատարեց ԳԱԱ թղթակից անդամ Լ. Շ. Հովհաննիսյանը: Գ. Զահուկյանի

«Հայերեն ստուգաբանական բառարանի» վերաբերյալ քննական նկատառումներ ներկայացրեց Բ.Գ.Պ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը:

Լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի աշխատակիցները խոսեցին լեզվական աղավաղումների, սխալների և անճշտությունների, գրական կանոնարկման խնդիրների շուրջ: Հայերենի բարբառների զանազան իրողությունների անդրադարձան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցները, նաև ակադեմիական ու բուհական համակարգերի այլ ներկայացուցիչներ: Միրիայի հայ համայնքի լեզվական վիճակին, սփյուռքահայ դպրոցի առջև ծառացած հրատապ խնդիրներին անդրադարձավ Բ.Գ.Թ. Հ. Չոլաքյանը:

Թարգմանաբանության առանձին հարցերի իր լուծումները ներկայացրեց թարգմանչուհի Ա. Հակոբյանը: Միջին հայերենի իրանական բառաշերտի վերաբերյալ ուշագրավ զեկուցում կարդաց իրանցի լեզվաբան Մ. Մալեք-Մոհամմադին: Հայոց լեզվի զարգացմանը, կառուցվածքին և գործառույթներին, համեմատական քերականությանը վերաբերող բազմազան հարցերի անդրադարձան լեզվի ինստիտուտի, այլև ՀՀ բուհերի մի շարք գիտաշխատողներ:

Գիտաժողովում ելույթ ունեցան և մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Գ. Բարդակչյանը, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, Բ.Գ.Պ. Ա. Իսահակյանը:

Նախատեսվում է առավել ուշագրավ զեկուցումները լույս ընծայել «Ջահուկյանական ընթերցումներ» հերթական ժողովածուով:

- 2014 թ. սեպտեմբերի 16-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի նիստ: Քննարկվեցին գիտական և գիտակազմակերպական տարաբնույթ հարցեր. ինստիտուտի ասպիրանտի ատենախոսության թեմայի հաստատում և գիտական ղեկավարի նշանակում, հայցորդի ձևակերպում: Հաստատվեցին «Հայ բարբառագիտության հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտաժողովի ծրագիրը և «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013» շրջանակներում իրականացված «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվությունը:

- ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հոկտեմբերի 1–2–ը կայացավ Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 4–րդ գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցեցին երիտասարդ մասնագետներ հանրապետության գիտական, կրթական տարբեր հաստատություններից՝ ԳԱԱ լեզվի ինստիտուտից, Մատենադարանից, ԵՊՀ–ից, ԵՊԼՀ–ից, ԵՊՄՀ–ից, նաև բուհերի մարզային մասնաճյուղերից և Արցախի համալսարանից:

Ներկայացված զեկուցումներում հարցերի շրջանակն ընդգրկում էր. երիտասարդ հետազոտողների ուսումնասիրությունները վերաբերում էին լեզվի տարբեր փուլերին, առանձին դրսևորումներին, ինչպես նաև բառային, քերականական, ոճական առանձնահատկություններին և այլն: Գիտաժողովի ավարտին եղան ամփոփիչ ելույթներ: Լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանն ընդգծեց երիտասարդական գիտաժողովների կարևորությունը. դրանք համախմբում են հանրապետության երիտասարդ լեզվաբաններին, հնարավորություն ընձեռում գիտական արդյունքներ հրապարակելու և քննարկումների միջոցով հստակեցնելու արժարժված խնդիրները:

Նախատեսվում է գիտաժողովի արդյունքներն ամփոփել նյութերի առանձին ժողովածուում:

- ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հոկտեմբերի 8–ին և 9–ին տեղի ունեցավ «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովը: Հայաստանը, ԱՄՆ–ն, ՌԴ–ն, Ֆրանսիան, Ավստրիան, Շվեդիան, Նիդեռլանդները, Իրանի Իսլամական Հանրապետությունը ներկայացնող շուրջ երեք տասնյակ հայերենագետների ու բարբառագետների քննարկման առարկա էին բարբառագիտության տեսական հարցեր, հայերենի բարբառների ուսումնասիրության արդի խնդիրներ: Գիտաժողովի արդյունքները հոկտեմբերի 10–ին ամփոփվեցին արտագնա նիստում, որը տեղի ունեցավ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում՝ տեղի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության մասնակցությամբ: Մարզային բուհի մասնագետներն ու ուսանողները ծանոթացան

գիտաժողովում հայերենագետների ներկայացրած գիտական նորություններին, ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Լեզվի ինստիտուտի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջև կնքվեց գիտատնտեսական համագործակցության հուշագիր: Գիտաժողովի մասնակիցները եղան Մակարավանքում:

- 2014 թ. հոկտեմբերի 28–ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի նիստում «Քերովբե Պատկանյանը և հայ բարբառագիտությունը» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, Բ.գ.դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը: Զեկուցումը նվիրված էր անվանի արևելագետ, աղբյուրագետ, բանասեր, լեզվաբան, ռուսական ակադեմիայի թղթակից անդամ Ք. Պ. Պատկանյանի (1833–1889) գիտական ժառանգությանը, մասնավորապես նրա բարբառագիտական հայացքներին:

Արժևորելով մեծ գիտնականի վաստակը՝ Վ. Գ. Համբարձումյանը մանրամասն վերլուծությամբ ներկայացրեց Պատկանյանի ավանդը հայ բարբառագիտության սկզբնավորման գործում, հիմնավորեց իր իսկ առաջ քաշած այն դրույթը, որ եվրոպացի հայերենագետները (Ֆ. Մյուլլեր, Հ. Հյուբշման, Ա. Մեյե և ուրիշներ) հայերենի բարբառներին մեծ տեղ են տվել հնդեվրոպական լեզուների ուսումնասիրման հարցում Ք. Պատկանյանի ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով թարգմանված աշխատություններին տեղյակ լինելու պարագայում: Եվ այդ մոտեցումը հետագայում իր ուսուցիչների խորհրդով և հորդորով տարիների ընթացքում իրագործեց Հ. Աճառյանը:

Ավելին, նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, թե այդ տեսությունը ինչքանով է արգասաբեր հնդեվրոպական լեզուների մեջ հայերենին, մանավանդ հայ բարբառներին առավել նշանակություն տալու առումով: Ուստի ավելի է մեծանում Ք. Պատկանյանի վաստակի գիտական արժեքը, մանավանդ մեր օրերի լեզվաբանության համար: Նրա հայերենագիտական, առաջին հերթին բարբառագիտական հիմնարար աշխատությունները մնում են որպես կարևոր ներդրում հայերենի

ծագման և զարգացման, հայ բարբառագիտության՝ որպես հատուկ գիտակարգի, և լեզվաբանության այլ հարցերի ուսումնասիրման գործում:

Զեկուցողը Ք. Պատկանյանի մյուս գործերի շարքում առանձնացրեց և ըստ ամենայնի ներկայացրեց «Հետազոտություն հայոց լեզվի բարբառների մասին» աշխատությանը, որի համար, ի դեպ, անվանի հայագետ Հ. Տաշյանը Ք. Պատկանյանին անվանել է «հայ բարբառագիտության հայր»:

- Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տարբեր բաժիններում առանձին կամ համատեղ, ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են տեսական սեմինարներ, լինում են քննարկումներ և թեմատիկ լսումներ: Սեմինար պարապմունքները սկսել են ավանդույթ դառնալ. ամեն ամիս ինստիտուտի բաժինների աշխատակիցները գիտական հաղորդում են տալիս իրենց բաժնում կատարվող աշխատանքների, ինչպես նաև այդ ուղղությամբ գիտական աշխարհում առկա նորությունների մասին:

Այսպես, 2014 թ. մարտի 31-ին տեղի ունեցավ արևմտահայերենի բաժնի սեմինար պարապմունքը, որում ելույթ ունեցավ ինստիտուտի արևմտահայերենի բաժնի աշխատակից, բ.գ.թ. Ա. Խաչատրյանը: Նա ներկայացրեց Սիրիայից ներգաղթած մեր հայրենակիցների կրթական խնդիրները, մասնավորապես անդրադարձավ 2012–2013 ուսումնական տարում Երևանի Նար-Դոսի անվան դպրոցում գործունեություն ծավալած Կիլիկյան վարժարանին: Սեմինարն անցավ աշխույժ մթնոլորտում. բանախոսը սպառնալիքներ տվեց հնչած հարցերին:

2014 թ. ապրիլի 9-ին կայացավ հանդիպում ասպիրանտների և հայցորդների հետ: Երիտասարդ հետազոտողները ներկայացրին իրենց աշխատանքների ընթացքը, առկա խնդիրները: Գիտահետազոտական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և իրականացման հարցերի շուրջ իրենց նկատառումները հայտնեցին ինստիտուտի մի շարք աշխատակիցներ:

2014 թ. ապրիլի 11-ին հայոց լեզվի պատմության բաժինը կազմակերպել էր սեմինար-քննարկում: Բաժնի գիտաշխատող, բ.գ.թ. Հ. Թադևոսյանը զեկուցեց «Անկատար դերբայի կիրառությունները 17-րդ դ.

բժշկարաններում» թեմայով: Զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, եղան մի շարք հարցեր, հայտնվեցին տարբեր կարգի նկատառումներ:

2014 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած հայոց լեզվի պատմության բաժնի սեմինար-քննարկման ժամանակ ինստիտուտի գիտական անձնակազմին ներկայացվեցին ուսումնասիրվող ոլորտի որոշ հարցադրումներ: Ընդսմին զեկուցումով հանդես եկավ բաժնի ավագ գիտաշխատող բ.գ.թ. Ս. Գրիգորյանը: Նա խոսեց Հին և Նոր Կտակարաններում արարողակարգային մի քանի հասկացությունների համեմատության մասին, որի շուրջ եղավ աշխույժ քննարկում, հայտնվեցին նկատառումներ:

2014 թ. սեպտեմբերի 17-ին ինստիտուտի արևմտահայերենի բաժնի սեմինարին զեկուցմամբ հանդես եկավ բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Ե. Սարգսյանը և ներկայացրեց բաժնի կատարված աշխատանքների հիմնական ուղղությունները: Տեղեկություններ հաղորդեց արևմտահայերենի բաժնի սփյուռքի խմբի անդամների հետ համատեղ իրականացվող աշխատանքների, արդի արևմտահայերենի գործնական բառարանի կազմման առաջին փուլի ընթացքի մասին: Ամփոփելով խոսքը՝ զեկուցողն անդրադարձավ տարբեր գաղթօջախների արդի լեզվավիճակի հետազոտման հրատապության և արևմտահայերենի կանոնարկման խնդիրներին: Վերջում Ա. Սարգսյանը պատասխանեց նաև ներկաների հարցերին:

Հոկտեմբերի 31-ին տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ նվիրված UNL (Համընդհանուր ցանցային լեզու) ծրագրի աշխատանքներին Հայաստանում: Զեկուցեց ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ տ. գ. թ. Ա. Մանուկյանը, որը ներկայացրեց UNL համակարգի հայկական մոդուլի մշակման և զարգացման ավելի քան 10-ամյա պատմությունը:

- Նոյեմբերի 14-ին կայացած գիտական խորհրդի նիստում լավեցին հաղորդումներ միջազգային տարբեր գիտաժողովներին ինստիտուտի երիտասարդ լեզվաբանների մասնակցության մասին:

Հայոց լեզվի պատմության բաժնի գիտաշխատակից, բ.գ.թ. Տ. Սիրունյանը մասնակցել է սեպտեմբերի 23–25–ին Ս. Պետերբուրգում կայացած «Հայկական ժառանգության գրավոր հուշարձանները» խորագրով միջազգային գիտաժողովին, որ կազմակերպել էր նույն պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը: Գիտաժողովում նա զեկուցում է ներկայացրել Մխիթար Սեբաստացու թարգմանական երկերի լատինատիպ քերականական տերմինների վերաբերյալ:

Բարբառագիտության բաժնի գիտաշխատակից, բ.գ.թ. Գ. Մկրտչյանը մասնակցել է սեպտեմբերի 22–24–ին Ռուսաստանի Դաշնության Ստավրոպոլի երկրամասի Նովոկումսկի քաղաքում կայացած «Լեզվաբանական էկոլոգիա. անհետացող լեզուների պահպանում» խորագրով միջազգային գիտական նստաշրջանին: Նա հանդես է եկել «Մշո բարբառը» թեմայով զեկուցմամբ, որում հանրալեզվաբանական քննության է ենթարկել հիշյալ բարբառի տարածքային հիմքերի խախտման դրսևորումները, ներկայացրել բարբառի արդի վիճակը:

Այնուհետև գիտխորհուրդն ամփոփեց 2014 թ. հոկտեմբերին կայացած երկու գիտաժողովների՝ Երիտասարդ լեզվաբանների հանրապետական 4–րդ և «Հայ բարբառագիտության հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովների արդյունքները, այլև հրատարակության երաշխավորեց արդի հայերենի բաժնի ավագ գիտաշխատակից, բ.գ.թ. Ս. Պապիկյանի «Կինեմատոգրաֆիական և թատերագիտական տերմինների համառոտ բառարան» աշխատանքը:

**ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական
անձնակազմի հայտարարություն (22-ը ապրիլի, 2014)**

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Հայոց եղեռնի 99-րդ տարելիցին:

Ինստիտուտի աշխատակիցները ոգեկոչեցին Հայոց եղեռնի զոհերի հիշատակը, անդրադարձան Եղեռնի հետևանքով հայության կրած կորուստներին: Մասնակիցները միահամուռ դատապարտեցին մարդկանց զանգվածային ոչնչացմանն ուղղված ցանկացած գործողություն, բռնության ամեն մի դրսևորում՝ հատկապես ընդգծելով վերջերս քեսաբահայության կրած տառապանքները, բռնի տեղահանությունը:

Կոչ արվեց համայն հայությանը ձայն բարձրացնելու և հանդես գալու ի պաշտպանություն քեսաբահայության, համախմբվելու հայրենի պետականության և ազգային իդձերի իրականացման գաղափարի շուրջ, նպաստելու հայրենիքի հզորացմանը, սիրելու, պահպանելու և զարգացնելու մայրենի լեզուն:

Ինստիտուտի գիտական անձնակազմը որոշեց անել հետևյալ հայտարարությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**(ընդունված ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական անձնակազմի ընդհանուր ժողովում)**

Գրեթե մեկ դար է, որ ողջ հայությունը կրում է եղեռնագարկ եղած, մարդկային, նյութական, մշակութային, տարածքային ահռելի և անդառնալի կորուստներ կրած և այդպիսով ճակատագրի խեղման արժանացած ժողովուրդ լինելու ծանրագույն լուծը, արդեն շուրջ հարյուր տարի է, որ յուրաքանչյուր հայի հոգում դաջված են կոտորածների,

մշակութային արժեքների ոչնչացման, հայրենիքի մեծագույն մասի կորստի տառապագին հիշողությունն ու անամոք ցավի զգացումը: Հայության գոյատևման ու զարգացման բնականոն ընթացքի վայրենի և անմարդկային բեկումը մեծագույն վնաս հասցրեց ողջ մարդկային քաղաքակրթությանն ու համաշխարհային մշակույթին: Քսաներորդ դարասկզբի Հայոց եղեռնը՝ իր դրսևորման հրեշավոր ու գազանաբարո եղանակներով, մարդկության ամոթն է, և այդ խարանը չի ջնջվի այնքան ժամանակ, քանի դեռ աշխարհի բոլոր ժողովուրդներն ու պետությունները չեն դատապարտել Օսմանյան կայսրության ոճրագործությունը, ու քանի դեռ չեն փոխհատուցվել հայ ժողովրդի տարածքային ու նյութական վնասները: Ցավոք, անցած դարում հայ ժողովրդին պատուհասեցին նոր արհավիրքներ՝ ստալինյան բռնադատություն, Մուսկաթի, Բաքվի ջարդեր, Գետաշենի հայաթափում, դարաբաղյան պատերազմ: Հայ ժողովուրդը դիմակայեց նաև այդ փորձություններին, սակայն նոր դարի սկզբում՝ ցեղասպանության հարյուրամյակի նախաշեմին, հայության արարող և խաղաղասեր մի հատված իր բնօրրանում՝ Քեսաբում, կրկին վերապրեց եղեռնի սարսափները՝ ենթարկվելով բռնությունների և տեղահանության: Քեսաբցի մեր հայրենակիցները մինչև օրս էլ հնարավորություն չունեն վերադառնալու իրենց բնակության վայր և ինչպես բարոյական, այնպես էլ նյութական մեծ աջակցության կարիք ունեն:

Դիմելով միջազգային հանրությանը, հակամարտող կողմերին՝ պահանջում ենք անհապաղ քայլեր ձեռնարկել՝ վերականգնելու քեսաբահայերի՝ իրենց հողի վրա խաղաղ ու անվտանգ ապրելու և արարելու աներկբայելի իրավունքը, հնարավորություն ստեղծելու, որպեսզի խաղաղ բնակչությունը վերադառնա և կարողանա նորոգել իր ավերված օթևանը, վերստեղծել բնականոն գոյատևման համար անհրաժեշտ պայմաններ:

Դիմում ենք նաև աշխարհի բոլոր հայերին՝

ա) համախմբվել հայրենի պետականության շուրջ և ամեն կերպ նպաստել նրա ամրապնդմանը, զարգացմանն ու հզորացմանը՝ այդպիսով դիմակայելով պատմական հեղաբեկումներին,

փորձություններին, համաշխարհային քաղաքական և տնտեսական վայրիվերումներին,

բ) միահամուռ ջանքեր գործադրել՝ նպաստելու քեսաբահայության խնդրի արդարացի լուծմանը և ապահովելու նրանց կյանքի բնականոն ընթացքի վերականգնումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի <i>խաղող</i> և <i>գինի</i> բառերի շուրջ	4
Ն. Մ. Սիմոնյան, Ստուգաբանական դիտարկումներ	10
Վ. Գ. Համբարձումյան, Լատինաբան ձևերի գործածությունը Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ում	15

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վ. Լ. Կատվալյան, Արևմտահայերենի արդի վիճակը Սիրիայի հայ համայնքում	22
Ա. Ե. Սարգսյան, Լեզվական մշակույթի տիպաբանական բնութագիրը	28

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Լ. Ավետիսյան, Գրաբարի անվանական կայուն կապակցությունների տարբերակները	35
Ա. Հակոբյան, Թարգմանչական արվեստի գնահատման օբյեկտիվ չափանիշները	44

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Գ. Համբարձումյան (գրախոս.), Լ. Շ. Հովհաննիսյան, Հատուկ անունների մեկնությունները Մովսես Խորենացու «Հայց պատմության» մեջ (Ե., 2013, 48 էջ)	51
Գ. Մկրտչյան (գրախոս.), Վ. Լ. Կատվալյան, Հայ բարբառագիտության հարցեր (Ե., 2014, 232 էջ)	54

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	59
-------------------------	----

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

Լ. Շ. Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը	66
Ռ. Լ. Ուռուտյանի ծննդյան 80-ամյակը	68

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	70
---------------------	----

СОДЕРЖАНИЕ

Статьи

Л. Ш. Оганесян, О древнеармянских словах խափղ (xafoł) «виноград» и գինի (gini) «вино»	4
Н. М. Симонян, Этимологические заметки	10
В. Г. Амбарцумян, О некоторых латинизированных форм в «Армянском словаре» Еремии Мегреци	15

Дискуссии и обсуждения

В. Л. Катвалян, Современное состояние западноармянского языка в общине Сирии	22
А. Е. Саргсян, Типологическая характеристика языковой культуры	28

Сообщения

Л. Аветисян, Варианты номинативно устойчивых сочетаний в грабаре	35
А. Акопян, Объективные критерии оценки искусства перевода	44

Рецензия

Л. Ш. Оганесян, Толкования собственных имен в «Истории Армении». Мовсеса Хоренаци (Е., 2013, 48 с.)	51
В. Л. Катвалян, Вопросы армянской диалектологии (Е., 2014, 232 с.)	54

Книжное обозрение	59
--------------------------------	----

Наши юбиляры

Լ. Շ. Հովհաննիսյանի ծննդյան 70-ամյակը	66
Ռ. Լ. Ուրուտյանի ծննդյան 80-ամյակը	68

Хроника	70
----------------------	----

CONTENTS

Articles

L. Sh. Hovhannisyan, On the Old Armenian Words խաղող (xaḡoṭ) «Grape» and գինի (Gini) «Wine»	4
N. M. Simonyan, Etymological Observations	10
V. G. Hambardzumyan, On Some Latinized Word-Forms, in the «Armenian Dictionary» of Eremia Megretsi	15

Discussion

V. L. Katvalyan, Corrent State of the Western Armenian of the Armenian Community in Syria	22
A. E. Sargsyan, Tipological of Language Cultur	28

Reports

L. Avetissyan, The Variants of Nominative Stable Compounds Of Old Armenian ...	35
A. Hakobyan, The Objective Criteria of the Art of Translation	44

Reviews

L. Sh. Hovhanisyan, On the Interpretation of the Proper Name in «History of the Armenian» of Movses Khorenatsi (Yerevan, 2013, 48 p.)	51
V. L. Katvalyan, Problems of Armenian Dialectology (Yerevan, 2014, 232 p.)	54

Book reviews	59
---------------------------	----

Jubilees

L. Sh. Hovhannisyan's 70 th birthday anniversary	66
R. L. Uroutyan's 80 th birthday anniversary	68

Science News	70
---------------------------	----

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը վերստին հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով), 8–10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1,5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները՝ ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն միմյանց:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ միասին:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ. փոստ՝ inslang@sci.am

К СВЕДЕНИЮ

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003 г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем – в пределах 8–10 машинописных страниц, интервал – 1,5, размер шрифта – 12, шрифт – Sylfaen (резюме на русском и английском – Times New Roman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл. почта: inslang@sci.am

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8–10 pages, line spacing – 1,5, font size – 12, fonts – Sylfaen (the summary in Russian and English – Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1–2 (12)
2014

Չափսը՝ 70x100/16: Տպագրությունը՝ օֆսեթ:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 5.5 տպ. մամուլ:

Տպագրվել է «Հանգակ-97» ՍՊԸ տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝(+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am